



## Ոչ ոք չի ուզում պատասխանատվություն ստանձնել

Նաիրա ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

Լրագրող  
Ստեփանակերտ

Հայաստանում, էլ չեմ խոսում Ղարաբաղի մասին, տեղեկատվությունը մենաշնորհվել է որոշակի մի խումբ անձանց կողմից: Սույն անձանց շրջանակը հնարավոր չէ սահմանել ըստ զբաղեցրած պաշտոնի, ունեցած հարստության կամ ազգակցական կապերի: Պարզապես մարդկանց որոշակի մի կատեգորիա իրեն իրավունք է վերապահում այսպես խոսելու՝ «մենք որոշել ենք», «կարծում եմ, ժողովրդին առայժմ պետք չէ դա իմանալ», «երբ ամեն ինչ համաձայնեցված լինի՝ այն ժամանակ էլ կասենք»: Ու հայտնի չէ, թե որտեղով է անցնում սահմանը «նրանց» եւ «մեր» միջեւ: Ըստ երեւոյթին, յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում, թե մարդկության որ կեսին է ինքը պատկանում՝ իրազեկների , թե՞ հետետրդ-կողմնակիցների:

Սակայն, կան հարցեր, որոնք վերաբերվում են յուրաքանչյուրիս եւ ամբողջ երկրի ճակատագրին, եւ այդ հարցերը ոչ ոք իրավունք չունի մենաշնորհելու: Դիցուք, շատ են խոսում ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացի զաղտնապահության մասին: Դիվանագետները եւ իշխանական կառույցների

ներկայացուցիչները պնդում են, որ այդ բանակցությունները գաղտնապահական են, եւ միայն բոլոր հարցերը համաձայնեցնելուց հետո պարզ կլինի՝ դրանք մեզ համար բարենպաստ են, թե՛ ոչ:

Ցայսօր Ղարաբաղի քաղաքացիները կուրորեն հետեւում էին իրենց «տեղեկացված» ղեկավարներին եւ ավելորդ հարցեր չէին տալիս այն մասին, թե դեպի որ կողմն է թեքվում ղարաբաղյան կարգավորումը: Բայց վերջին ժամանակներս ղարաբաղցի քաղաքացու գիտակցության մեջ բեկում տեղի ունեցավ: Նա հասկացավ, որ երբ իրեն տեղյակ պահեն բանակցությունների արդյունքների մասին՝ կարող է արդեն ուշ լինել: Եւ ժողովուրդը, ինչպես ասում են, «իրեն թափ տվեց»:

Այն վստահությունը, որ հայկական իշխանությունները Ղարաբաղի շահերին հակասող գաղտնապահական բանակցություններ երբեք չեն վարի, խարխալվեց ԼՂՀ Ազգային ժողովում արտաքին գործերի նախարար Գեորգի Պետրոսյանի եւ ԼՂՀ նախագահի խորհրդական, պաշտոնաթող գեներալ Վիտալի Բալասանյանի ելույթներից հետո: Խորհրդարանի նիստում հնչած անմիջական ու հստակ հարցերը գիտակցաբար, թե թյուրիմացաբար ցուցադրվել են Արցախի հանրային հեռուստատեսությամբ: Իրականում Պետրոսյանն ու Բալասանյանը ոչ մի նոր բան չեն ասել, նրանք պարզապես փաստել են այն, ինչ առկա է բանակցային գործընթացում, այն է՝ որ բանակցություններն ընթանում են հայերիս համար ոչ բարենպաստ պայմաններում, որ Ղարաբաղը դուրս է բերվել բանակցային գործընթացից (ընդ որում՝ դրա մեղքը Հայաստանի իշխանությունների վրա է), որ բանակցություններում քննարկվում է տարածքների հանձնման եւ փախստականների վերադարձի հարցը: Այսինքն՝ այն ամենը, ինչով լիքն է հայկական մամուլն արդեն քանի տարի: Այն մասին, որ բանակցությունները վտանգավոր ուղու վրա են հայտնվել, քանիցս խոսել են ընդդիմադիր գործիչներն ու անկախ փորձագետները, բայց իշխանական քարոզչությունը նրանց ասածները ներկայացնում էր կամ որպես հիստերիա, կամ էլ որպես թշնամական ուժերի կողմից հրահրված քայլ: Նրանք, ասում էին իշխանամետ գործիչները, մեր լավը չեն ուզում, դրա համար էլ պնդում են, որ Հայաստանի իշխանությունները զիջման են գնում ղարաբաղյան հարցում: Ընդդիմադիրների ու անկախ փորձագետների կարծիքները չէին ցուցադրում հեռուստատեսությամբ, դրանք անամոթաբար մանրատառ գետեղում էին թերթերի չկարդացվող էջերում եւ անվանում էին արմատական: Իսկ այսօր այդ մասին սկսեցին խոսել պետական ամենաբարձր մակարդակով: Եւ մարդիկ մտահոգվեցին:

Բանակցային գործընթացը Ղարաբաղի համար ոչ բարենպաստ հունով է ընթանում արդեն երկար տարիներ: Այս ամբողջ ընթացքում Ղարաբաղի լուրջությունը նպաստել է այն բանին, որպեսզի գործընթացը զարգանա հենց այս հարթությունում: Հնարավոր է, որ եթե Ղարաբաղի իշխանություններն ու ժողովուրդը ժամանակին բարձրաձայնեին իրենց բողոքը, ապա բանը չէր հասնի «մադրիդյան սկզբունքներին», եւ Հայաստանի վրա ճնշում չէին գործադրի տարածքները հանձնելու հարցում: Եթե Ղարաբաղն իր խոսքն ավելի վաղ ասեր, ապա Թոմ դե Վաալը վստահ չէր պնդի, թե «հայերին չի հաջողվի պահպանել Ղարաբաղի շուրջ տարածքները», այլ կասեր, որ «Ադրբեջանը ստիպված կլինի հրաժարվել Ղարաբաղը վերադարձնելու մտքից»: Որովհետեւ քաղաքականությունը հաճախ վարվում է «նյութերի դիմադրության» սկզբունքներով՝ սեղմում են այն կետը, որտեղ նյութի դիմադրությունն առավել թույլ է:

Եւ այս առումով բանակցային գործընթացի էությունը թաքցնելու՝ Հայաստանի եւ Ղարաբաղի տեղեկատվական քաղաքականությունը կարելի է անվանել ղարաբաղցիների համար ոչ բարենպաստ առաջարկների ընդունման հանցակցություն: Բայց սրանով ղարաբաղյան հանրության մեղքն ու պատասխանատվությունը չեն նվազում, քանի որ հանրությունը շարունակում է հանցավոր անտարբերություն դրսևորել սեփական ճակատագրի հանդեպ՝ անվերապահորեն վստահելով իշխանություններին: Եւ անգամ խորհրդարանում հնչած տագնապից հետո հանրությունը վերջնականապես չգարթնեց, այլ պարզապես տրորեց աչքերը եւ, լսելով «ամեն ինչ լավ է լինելու»-ի հանգույն նոր հավաստիացումներ ու հանգստանալով՝ նորից նիրհի մեջ է ընկել: Այսպես ավելի հեշտ է, պարզապես հետո կարիք չի լինի որեւէ մեկին մեղադրել:

Մեփական դիրքորոշումն արտահայտելու միջազգային ամբիոն, դիվանագիտական կառույցներ, ազդեցիկ գործիչներ ու գորեղ լոբիստներ հնարավորություն չունեցող Ղարաբաղի համար տեղեկատվական քաղաքականությունն արտակարգ կարեւորություն է ձեռք բերում: Բնտերնետի դարում շատ ավելի հեշտ

ու էժան է տեղեկատվական քաղաքականություն վարելը: Ղարաբաղյան իշխանությունների այն արդարացումները, որ, իբր, տեղեկատվության ոլորտը մեծ ու լուրջ ներդրումներ է պահանջում, ընդամենը բլեֆ է, որը հասցեագրված է անտեղյակներին: Իրականում տեղեկատվական քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ է քաղաքական կամք եւ անկախ քաղաքականություն տանելու ցանկություն, սեփական դիրքորոշման հստակ ձեւակերպում եւ պատասխանատվություն ստանձնելու ունակություն:

Ցավոք, նշյալ բոլոր պայմանները Ղարաբաղում բացակայում են: Ղարաբաղի իշխանությունները գերադասում են անկախ քաղաքականություն չվարել, նրանք քաղաքական կամք չունեն սեփական դիրքորոշումն ազդարարելու համար, որն էլ, ի հավելումն այս ամենի, հստակ ձեւակերպված չէ, եւ, ամենագլխավորը՝ ոչ ոք չի ուզում պատասխանատվություն ստանձնել: Այստեղ համարվում է, որ հանցավոր անգործությունը թաքցնելու համար հարկ է ընդամենը մենաշնորհել տեղեկատվությունը եւ ասել՝ «առանց Ղարաբաղի, միեւնույն է, հարցը չի լուծվի»: Այս մարտավարությունը, սակայն, կարող է արդյունք տալ ինչ-որ ժամանակ, բայց ոչ մշտապես: Այն կարող է գործել այնքան ժամանակ, քանի դեռ, ինչպես ասում են, խոփը դեմ չի առել քարին:

## Լեոնային Ղարաբաղի՝ որպես սուբյեկտի կերպարի տեղեկատվական ձեւավորումը

### Վահրամ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«Հայրենիք» թերթի գլխավոր խմբագիր  
Ստեփանակերտ

Վերջին տարիների հիմնական հարցադրումներից մեկը, որ առավել հաճախ է հնչում, այս է՝ Լեոնային Ղարաբաղն իրոք անկախ սուբյեկտ է, թե՞ Հայաստանի մաս:

Այս երկվությունը երբեմն-երբեմն արտահայտվում է նաեւ քաղաքական հարաբերություններում: Հայաստանի երրորդ հանրապետության «հայրերից» մեկը, բուն բանավեճից հետո, երբ սպառվել էին մյուս բոլոր փաստարկները, հանկարծ անկեղծացավ. «Էնքան ասացինք անկախ ենք, դուք էլ լուրջ ընդունեցիք»:

Դա 1992 թ. ծանր ամռանն էր:

Այդ իրավիճակում, երբ ադրբեջանական բանակը «բախում էր Ստեփանակերտի դռները», պաշտոնական Երեւանը գրեթե կոպտորեն դրել էր «Արցախում արժանի պարտնյոր ունենալու անհրաժեշտության» հարցը եւ հասել իր համար «միակ ընդունելի» հանգուցալուծման:

Ներկա փաստացի կոնֆիգուրացիայի իմաստով դժվար է քննադատել Հայաստանի իշխանություններին, թե ինչու 1992 թ. օգոստոսին նրանք առնվազը ջատագովեցին, որ Լեոնային Ղարաբաղի ընտրյալ իշխանությունը փաստացի տեղը զիջի կառավարման «ռազմատստիկականակն» այն համակարգին, որի «կազմաքանդումը» 1999-2000 թվականներին արժեցավ ներքաղաքական ճգնաժամ, քաղաքացիական դիմակայության իրական սպառնալիք, բայց, այդուհանդերձ, մի թե հնարավոր չէր համաձայնության գալ եւ ընտրել այլ տարբերակ:

Քիչ վերելում ակնարկված անձն, օրինակ, խիստ կասկածում էր, որ ԼՂ «Դաշնակցական Գերագույն խորհրդի» ուղղակի ենթակայության տակ լավ զինված, կուշտ եւ հանդերձավորված Պաշտպանության բանակը «կհասցվի Երեւան, որպեսզի նախագահին տապալի»: Ո՞վ էր նրան ներշնչել, որ Լեոնային

Ղարաբաղում կարելի էր գտնել մի քաղաքական դեմք, ով գործին կմղեր գնալ ու դառնալ «դաշնակցական խռովության» գործիք՝ իր գաղտնիքն է: Փաստն այն է, որ «կառավարելի իշխանությանը» օժտված Լեոնային Ղարաբաղը ոչ 1992 թ., ոչ հետագայում չէր կարող ինքնուրույն դերակատար լինել: Չեմ ուզում չափազանցնել, բայց իրավիճակը գրեթե հայելապատկերն է այն ընկալումների, որ մենք ունենք:

Ո՞րն է մեր «իդեա-ֆիքսը»:

Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնությունը:

Մենք ընդհանրապես «երրորդության» ժողովուրդ ենք՝ ԱԶԱՏ-ԱՆԿԱԽ-ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԱՅԻՄԻ 9-Ի ԵՌԱՏՈՆ, ԱՐՅԱԽ-ՀԱՅԱՍՏԱՆ- ՍՓՅՈՒՌԲ ԵՌԱՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ:

Շատ վաղուց Հայաստանն ունի իր «Քրքր քրքրոյանը»՝ մեծահասարուստներ, ում եւ մյուս բոլորի վճարած հարկերից ձեւավորվում է պետական բյուջեն, բայց տեղեկատվական ցանցերում գերիշխում է այն հոսքը, որ «Հայաստանն առանց Սփյուռքի ֆինանսական աջակցության չի կարող գոյատևել»:

Որքա՞ն է Ադրբեջանի ՀՆԱ-ի կառուցվածքում թուրքական բիզնեսի ներդրումը: Հայկական որեւէ լրատվամիջոց այդ մասին ոչինչ չի ասում, որովհետեւ Ադրբեջանը նման տեղեկատվություն չի տարածում: Չի տարածում նաեւ Թուրքիան: Բայց ադրբեջանական բոլոր լրատվամիջոցներն անցյալ աշնանը հանվանե հրապարակեցին արտասահմանյան բոլոր ներդրողների պաշտոնական ռեկվիզիտները, ովքեր «տնտեսական գործունեություն են ծավալում օկուպացված Լեոնային Ղարաբաղում եւ հարակից տարածքներում»: Ի վերջո, ինչի՞ նման է, երբ մենք աշխարհով մեկ «ծուրրուղու ենք կանչում», որ 10 միլիոն հայությունը տարեկան առավելագույնը 30 միլիոն դոլար է հանգանակում «վասն Արցախի»: Եւ այսքանից հետո Միացյալ Նահանգների դեսպանորդ-դիվանագետի, ֆրանսիացի, ռուս համանախագահների առաջ հարց ենք բարձրացնում, թե ինչու՞ Լեոնային Ղարաբաղը չի մասնակցում բանակցություններին: Իսկ նրանք ասում են. «Այդ հարցը դուք պիտի լուծեք Հայաստանի հետ»:

Միջազգային ճգնաժամային խումբը Լեոնային Ղարաբաղի հարցով զեկույցներ է գրում: Ոչ պաշտոնապես ասվում է, որ դրանք գրվում են ՄԽ համանախագահության «պատվերով»: Եւ ամեն անգամ, որպես ԼՂ անկախությունը չճանաչելու «հիմնավորում», ՄՃԽ-ն հստակ ընդգծում է «շարունակվող տնտեսական կախվածությունը Հայաստանից»: Իբր այլ կերպ հնարավոր է, բայց մենք չենք ուզում: Եւ սա դառնում է կաղապար, կլիշե, որից էլ մակաբերվում է համապատասխան քաղաքական վերաբերմունք:

Մենք մեզ թույլ ենք տալիս հրապարակային ելույթում, հարցազրույցում, չգիտեմ՝ հողվածում, ասել, որ «Արցախը փաստացի Հայաստան է, իսկ Լեոնային Ղարաբաղի անկախության հռչակումը մեր մեծագույն փոխզիջումն է»: Այսինքն, ասում ենք, որ մեր անկախությունը մի խաղ է, թե չէ ո՞վ չգիտի, որ «միացումը» եղել է, կա ու կլինի գերխնդիր: Եւ դրա համար էլ, կամ էլ նաեւ դրա համար միջազգային հանրությունը չի հավատում, որ Լեոնային Ղարաբաղն իրոք անկախ սուբյեկտ է՝ ընդունակ կայացնել սեփական որոշումները:

Հրապարակավ ասում ենք, որ Լեոնային Ղարաբաղը պետք է մասնակցի բանակցություններին, բայց տառացիորեն նույն նախադասության մեջ էլ ավելացնում, որ անհրաժեշտ է Հայաստանի եւ ԼՂ միջեւ կատարել «դերաբաշխում»: Այդ ի՞նչ «սցենար» է գրվել, ո՞վ է հեղինակը, ի՞նչ ենք խաղում, «ողբերգությունն», թե՛ «կատակերգություն», որ դերաբաշխում էլ պիտի անենք: Եւ ստացվում է գուտ «հայկական վոդեվի», որի եւ սկիզբը, եւ ավարտը «ծամում-դնում ենք» ադրբեջանական տեղեկատվական ցանցերի «բերանում»:

Ասում ենք՝ «Լեոնային Ղարաբաղը ռազմաքաղաքական ինքնուրույն սուբյեկտ է»,- բայց մայիսի 9-ին նշում ենք Պաշտպանության բանակի, հունվարի 28-ին՝ Հայաստանի զինված ուժերի, փետրվարի 23-ին՝ Հայրենիքի պաշտպանի օրը: Եւ այս ամենը «գնում է» որպես տեղեկատվական հոսք, մատուցվում է աշխարհին: Որեւէ երկիր զինված ուժերի երեք տոն ունի՝

Ընդհանրապես, մեզ թվում է՝ եթե ինքներս աշխարհի անցուղարձով չենք հետաքրքրվում, ապա աշխարհն

Էլ մեր հանդեպ է անտարբեր: Միավրում ենք: Մեր ամեն մի խոսքը հայտնվում է «վերլուծաբանական մանրադիտակի» տակ: Եւ մեր մասին դատում են ըստ մեր «խոսքի», որը ոչ միայն «միջազգային լեզվի» դժվար է թարգմանել, այլև խիստ հակասական է: Երբեմն էլ՝ իրարամերժ: Փորձեք, ուրիշ լեզվի չեմ ասում, ռուսերեն թարգմանել «Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնություն», «մայիսյան եռատոն» հասկացությունները եւ կհամոզվեք, որ «մեզ չի հասկանա օտարերկրացին, մեզ չի հասկանա սառն օտարուհին», - որովհետեւ այդ օտարերկրացին անկասկած զարմանում է, երբ ասում ենք, որ «Արցախն ուժեղ է Սփյուռքով, Սփյուռքը՝ Արցախով»: Կամ՝ որ «Լեռնային Ղարաբաղի հարցը Հայ դատի բաղկացուցիչն է»:

Ի՞նչ ենք դրանով ուզում հասկացնել: Միայն մի բան՝ որ «այս հարցը լուծելուց հետո միասնաբար լուծելու ենք նաեւ Արեւմտահայաստանի բռնազավթված հողերի հարցը»: Եւ ճիշտ նույն պահին էլ միջազգային միջնորդները չեն հավատում մեր այն փաստարկին, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ինքնորոշվել է եւ ձեռք բերել անկախություն:

Վարդգես Պետրոսյանն ասում էր՝ «ամեն երեք հայից երկուսը բանաստեղծ է, մեկը՝ դիվանագետ»: Հիմա բանաստեղծություն գրելը հարգի չէ, դրանով «տուն չի պահվի», ուստի ազգային մտասուեռման բնագավառ է դարձել դիվանագիտությունը: Մի քիչ էլ՝ քաղաքագիտությունը: Եւ երեք հայից երկուսն արդեն դիվանագետ է, մեկը՝ առնվազը վերլուծաբան: Եւ նրանցից յուրաքանչյուրն ունի ԼՂ խնդրի արդարացի, հայանպաստ լուծման «իրավաքաղաքական թղթապանակը»: Եւ երեքն էլ դիվետանտական համառությամբ հնչեցնում են նույն հանգերգը՝ «իշխանությունները մեզ չեն լսում, մեզ հետ խորհրդի չեն նստում, այլապես բանակցային գործընթացում այս իրավիճակը չէր ստեղծվի»:

Ակամայից հիշում եմ. 1992-ի ձմեռն էր: Խոջալուն նոր էր լռեցվել: Այն օրերի հիմնական փոխադրամիջոցը «թիվ 11-ն» էր: Գյուղից էինք գալիս: Զգիտեմ որտեղից մեզ միացել էր կադին տվող մի ջահել: Երբ հասնում էինք Դաշբուլաղի խաչմերուկ, տղան նայեց Խոջալուի ուղղությամբ, «ոտքը թափ գցեց» ու թե՛ «Բա, հլը դեռ էնքան հողեր ունենք ազատելու»: Իբր՝ այս մեկն ինքն էր ազատագրել, գնում էր մյուսների հոգսն էլ քաշի:

Հիմա մեր «դիվանագետ-քաղաքագետ-վերլուծաբաններն» են. իբր փաստացի իրավիճակն իրենց շնորհիվ է, «գնում են», որ գործը հասցնեն տրամաբանական հանգրվանի:

«Կաթիլը քար է ծակում»: Բայց «ցնցուղը» ոչ:

Մեր կողմից իբր թե «ձեւավորած»՝ ԼՂ՝ որպես ինքնուրույն սուբյեկտի մասին տեղեկատվությունը «կաթիլ» չէ, այլ «ցնցուղ», քանի որ բոլորով մենք չենք ասում նույն բանը: Բոլորով չունենք այն միակ կերպարի պատկերացումը, որն օպտիմալ ձեւով ընկալելի կլիներ նաեւ աշխարհի համար: Լեռնային Ղարաբաղի՝ որպես սուբյեկտի մասին մեր պատկերացումները գերազանցապես «ներքին շուկայական» են, բայց դա այն «ապրանքն» է, որ տեղում չէ, դրսում պիտի ունենա «սպառող»: Հակառակ դեպքում՝ դուրսն իր համար ստեղծում է այդ «ապրանքը» եւ անունը դնում «ոչ լեզիտիմ ռեժիմ»:

Սա է խնդիրը՝ մոդելավորել հռչակած անկախության միջազգային ճանաչման ձգտող ինքնուրույն սուբյեկտի կերպար եւ քարոզչության բոլոր հնարավորություններով այն ընկալելի դարձնել արտաքին աշխարհին՝ սկսյալ Ադրբեջանից:

Սա մասնավոր, բարեգործական կամ հասարակական սեկտորի իրավասության առաջադրանք չէ, այլ պետական: Բայց երբ ամեն անգամ մեզ տրվում է «շունչ առնելու» ժամանակ, երբ բանակցությունները հերթական անգամ փաստացի ձեւակերպումների չեն հանգում, մենք իսկույն մոռանում ենք, որ X ժամանակի հասկացություն կա: Որ այսօր չէ, վաղը, վաղը չէ, վաղը չէ մյուս օրը, մի օր, մի պահի գալու է պատասխանատվություն ստանձնելու պահը...

# Ամենամեծ վտանգը դանդաղ լինելու մեջ է

## Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ստեփանակերտի մամուլի ակումբի նախագահ  
Ստեփանակերտ

*Հասարակության առողջ զարգացման հիմքը հրապարակային բաց քննարկումն է:*

*Այն մարդը, որ խուսափում է հրապարակային քննարկումից՝ կամ հիմար է, կամ հետապնդում է շահեր, որոնք հակասում են հասարակության շահերին:*

## ՍՈՒՈՆ

Տեղեկատվության անվտանգության մասին խոսելիս սովորաբար դիտարկվում են զանազան հայեցակետեր, գիտական մշակումներ, ընդգծվում է տեղեկատվական անվտանգության հայեցակարգի անհրաժեշտությունը: Այս ամենը, ճիշտ լինելով հանդերձ, միեւնույն ժամանակ նաև խճողում է հարցն իր բարդությամբ, եւ գործի մեջ ոչ խորամուխ շարքային քաղաքացին մի տեսակ խրտնում է դրանից՝ ներքուստ, առանց բարձրաձայնելու հանգելով այն եզրահանգման, որ դա իր խելքի բանը չէ: Ուստի սույն մտորումներիս նպատակն այն բանալու որոնումներն են, որ հենց շարքային քաղաքացուն կարող է հասու դարձնել տեղեկատվական անվտանգության մի կարեւոր դիտանկյուն, որում շատ կարեւոր է հենց իր՝ շարքային քաղաքացու դիրքորոշումն ու կեցվածքը:

Ժողովրդավարությունը, որի մասին իշխանությունները սիրում են ճառել, ոչ այլ ինչ է, եթե ոչ նույն այդ իշխանությունների գործունեության նկատմամբ հանրային վերահսկողություն: Պարզելու համար, թե երկրում կա՞, արդյոք, ժողովրդավարություն, յուրաքանչյուր ոք կարող է իր «հետաքննությունն» անցկացնել: Իսկ դրա համար պարզապես պետք է պատասխանել ընդամենը մի հարցի՝ քո խոսքը, քո գործողություններն ազդո՞ւմ են իշխանությունների վրա, վերջիններիս գործունեությունը պայմանավորվա՞ծ է քո եւ նմանների կարծիքով: Եթե այո, ապա ուրախացիր, եթե ոչ, ապա, կներես, բայց ինքդ եւ մեղավոր: Ու մեղքիդ քավումը սկսիր նրանից, թե արդյո՞ք տեղյակ ես ինչ է կատարվում քո երկրում, քո բնակավայրում, քո քթի տակ, որպեսզի խոսքդ, ասածդ հիմնավոր լինի:

Ժողովրդավարություն կարող է լինել այնտեղ, որտեղ հրատապ հարցերը հրապարակայնորեն քննարկվում են: Իսկ քննարկել կարող են տեղեկացված, իրազեկ մարդիկ: Ահա թե ինչու մենք ոչ միայն իրավունք ունենք, այլև պարտավոր ենք տեղյակ լինել ամեն ինչին: Որովհետեւ դասագրքային ճշմարտություն է՝ միայն տեղյակ մարդը կարող է ճիշտ ընտրություն կատարել: Ժողովրդավարության «դասագիրքը» նաև հուշում է, որ որպես ազատ հասարակության քաղաքացիներ՝ մենք պարտավոր ենք հարցեր տալ իշխանությանը, որպես հարկատու՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի եւ պարտավոր է իմանալ՝ ինչ է անում իր կառավարությունը, ինչպես են գործում պաշտոնյաները, եւ ինչպես են ծախսվում հարկերից ստացված գումարները:

Ժողովրդավարությունն անհնար է առանց ազատ լրատվամիջոցների, քանի որ համապարփակ տեղեկատվություն ունենալու համար նախ պետք է ապահովել անկախ լրատվամիջոցների ինստիտուտը: Միայն իրազեկվածությունը կարող է նպաստել հաղթահարելու համատարած անտարբերությունը սեփական երկրի ու սեփական ճակատագրի հանդեպ, միայն տեղյակ լինելով կարելի է զգոն լինել: Իսկ ինչպես մեծերից մեկն է ասել՝ ազատության գինը հավերժական զգոնությունն է:

Սակայն ամբողջ դժբախտությունը կայանում է նրանում, որ մենք ըստ արժանավույն չենք գնահատում մեր զգոնությունն ապահովող անկախ լրատվության անհրաժեշտությունը, ըստ ամենայնի չենք ընկալում դրա կարեւորությունը, չենք հասկանում, որ դա մեր իսկ անվտանգությանն անմիջապես առնչվող խնդիր է:

Ընդունված կարծիքի համաձայն՝ վրացական հեղափոխության հաղթանակն ապահովեց «Ռուսթավի-2» հեռուստաընկերության համապարփակ տեղեկատվությունը: Մակայն այս հանգամանքը փաստելուց գատ քչերն են ուշադրություն դարձնում մեկ այլ հանգամանքի վրա, այն է՝ որ դա այդպես եղավ, քանի որ վրացական հանրությունը տեր կանգնեց, թիկունք կանգնեց իրեն տեղեկատվություն ապահովող լրատվամիջոցին, չթողեց, որ դրա բերանը փակեն: Իսկ մենք թողեցինք, որ «Ա1+»-ի բերանը խցանեն, մենք չըմբռնեցինք ու այսօր էլ չենք ըմբռնում, որ դա մեր անվտանգության հարցն է: Հասարակ մի օրինակ:

Անցած տարվա վերջին Աթենքում երիտասարդական զանգվածային հուզումների ու ոստիկանության հետ բախումների ժամանակ օրեր, շաբաթներ ու ամիսներ շարունակ տասնյակ հեռուստաընկերություններ ուղիղ եթերում ցուցադրում էին դեպքերը, եւ ցանկացած արեւացի կարող էր բազմաթիվ խողովակներով տեղեկություններ ստանալ, ակնատես լինել ոստիկանների ցանկացած քայլին, ժեստին, միմիկային: Ահա թե ինչու այնտեղ «Մարտի 1» չեղավ:

Մինչդեռ մենք այսօր էլ տեր չենք կանգնում «Ա1+»-ին: Իշխանափոխություն հնարավոր չէ ու չի էլ լինելու, քանի դեռ մենք չենք կարողացել ապահովել անաչառ տեղեկատվության մեր շնչափողը: Այդ շնչափողի ապահովմանը միտված զանգվածային միջոցառումները շատ ավելի մարդաշատ կլինեին, քան թե ընդդիմության ցանկացած հանրահավաք, քանի որ այն շոշափելու է ամենքի ու յուրաքանչյուրի շահերը, շոշափելու է յուրաքանչյուրի շնչափողը: Երբ բժիշկը «պատահմամբ» ոտքը դնում է հիվանդին արհեստական շնչառություն հաղորդող փողրակի վրա, ապա վերջին վայրկյանները պիտի օգտագործել ոչ թե նրա հրաժարական-վռնդումը պահանջող պետիցիան ստորագրելու, այլ...նրա ոտը քաշելու համար:

Առանց այդ շնչափողի մեզ շատ հեշտ է հիմարի տեղ դնելը, մեզնից թաքցնելը մեր իսկ ճակատագրին, մեր իսկ բուժմանը վերաբերող կենսական տեղեկատվությունը: Սոսկ մի օրինակ: Երբ հանրությունում ուժգնացավ ապրիլի 22-ին Հայաստանի, Թուրքիայի ու Շվեյցարիայի արտաքին-քաղաքական գերատեսչությունների կողմից ստորագրված փաստաթղթից դժգոհությունը, ՀՀ իշխանություններն անսպասելի ստեղծագործական մղումներով սկսեցին մեկնաբանել այն, իսկ մի օր էլ Անդրանիկ Միհրանյանը, տափաստանային շամանի խորհրդավորությամբ, սկսեց մարդկանց բացատրել, որ փաստաթուղթն ամենեւին էլ ապրիլի 22-ին չի ստորագրվել, այլ դրանից շատ առաջ, պարզապես այդ օրն են հանրությանը ներկայացրել: Ահա այդպես էլ մի տգեղ օր դարաբաղյան փաստաթղթի «անխուսափելի» ստորագրումից առաջ միհրանյանները մեզ փաստի առաջ կկանգնեցնեն, գուժելով, որ փաստաթուղթն այդ «է, գիտե՞ք եեեեեեերբ է ստորագրվել»:

Մա գաղտնապահություն չէ՝ գաղտագողություն է: Եւ այսպես են վերաբերվում մատաղացու գառների նկատմամբ:

Ինչ վերաբերում է գաղտնապահությանն ընդհանրապես, ապա, ի ցավ բոլորիս, գաղտնապահական են ոչ միայն դարաբաղյան ու հայ-թուրքական կարգավորման բանակցային գործընթացները, այլեւ... մեր պատմությունն ընդհանրապես: Սովետների ժամանակ կատակում էին, որ ոչ միայն երկրի ապագան է անկանխատեսելի, այլև անցյալը: Հայ ժողովրդի անցյալը միշտ էլ կանխատեսելի է եղել, այն է՝ անհայտ, անմատչելի, աղճատված ու հարմարեցված: Մենք չգիտենք մեր պատմությունը, մենք գաղտնապահում ենք մեզնից մեր իսկ պատմությունը, մենք թաքցնում ենք ճշմարտությունը: Այնպես որ, մեր պատմությունն իմանալը, անցյալի իրական փաստերն ու հանգամանքները վեր հանելը եւս տեղեկատվական անվտանգության եւ ընդհանրապես անվտանգության խնդիր է:

Ինչ վերաբերում է վերոնշյալ հարցերում Արցախում տիրող վիճակին, ապա այն ավելի անմխիթար է, քանի որ տեղեկատվական դաշտում չկա անգամ մեխանիկական բազմազանություն: Ասենք, եթե Հայաստանում գործում են տասնյակ հեռուստաընկերություններ, ապա Արցախում կա միայն մեկը՝ Արցախի հանրային հեռուստառադիոընկերությունը: Զավեշտ է, որ միայն Սյունիքի մարզում գործում է հինգ հեռուստաընկերություն, իսկ նորանկախ երկրում ընդամենը մեկը: Բայց սա չարիքի մի մասն է միայն: Բանն այն է, որ ինչպես Հայաստանում՝ այստեղ եւս «հանրայինը» միայն ցուցանակում է եւ ոչ թե էության մեջ: Այն առաջվա պես պետական է՝ բառի ոչ լավագույն իմաստով: Ավելի ճիշտ՝ պետական չէ, այլ՝ իշխանական, ավելի ստույգ՝ իշխանական չէ, այլ՝ բարձրագույն իշխանական է, քանի որ դժվար թե միջին

օղակի որեւէ պաշտոնյա ազդեցության լծակներ ունենա դրա վրա: Եթէ Հայաստանում ոչ միայն մեխանիկական, այլեւ բովանդակային բազմազանություն կա գոնէ տպագիր լրատվամիջոցներում, ապա Արցախում դա էլ է բացակայում: Նախագահական վերջին ընտրությունների ժամանակ ներկայիս նախագահի քարոզիչներից մեկը հրապարակավ պնդում էր գալիք բարեփոխումների մասին եւ հատկապէս ընդգծում հեռուստատեսության պարագան, որը, ըստ նրա, երկու ամսից հետո իսկապէս հանրային է դառնալու: Անցել է երկու տարի, իսկ «հանրայինը» ինչպէս փակ էր հանրության առաջ, այնպէս էլ փակ է հիմա: Ավելին՝ «բանավեճ» հասկացությունը «քրեորեն հետապնդելի» դառնալու ճանապարհին է:

Ասում են՝ մամուլը իրականության հայելին է: Ըստ այդմ էլ՝ կարելի է ասել, որ եթէ երկրում, մասնավորապէս՝ քաղաքական դաշտում բազմակարծություն չկա, ապա այն չի կարող լինել տեղեկատվական դաշտում: Այսօր հենց այդ պատկերն է՝ վերջին նախագահական ընտրություններից հետո երկրում անհետացել է ընդդիմությունը, ընդդիմության հետ էլ բազմակարծությունը: Այս պայմաններում, բնականաբար, անիմաստ է խոսել մամուլի ազատության մասին, որովհետեւ այն առաջին հերթին հենց բազմակարծություն է ենթադրում: Բայց ամբողջ ողբերգազավեշտը նրանում չէ, որ ժողովրդավարական Արցախում այսօր բազմակարծություն չկա, այլ նրանում, որ չկա...կարծիք ընդհանրապէս: Ներքաղաքական եւ արտաքին-քաղաքական կարեւորագույն հարցերում անգամ հազվադէպ է կարծիք հնչում՝ լռում են թէ քաղաքական ու հասարակական գործիչները, թէ ստեղծագործական մտավորականությունը, թէ այլք: Լռում են, քանի որ կարծիք պահանջող էլ չկա:

Տեղեկատվական անվտանգությունն անմիջականորեն առնչվում է մեր երկրի ու մեր իսկ ֆիզիկական անվտանգությանը: Երկրորդ հայկական պետականության չճանաչվածության պարագայում տեղեկատվական քաղաքականության առանցքը պիտի լինի մեր գոյության (իրական, այլ ոչ թէ թղթային գոյության) հավաստումը: Մինչդեռ հնարավոր չէ, ասենք, արտաքին տեղեկատվական քաղաքականություն վարել, եթէ արտաքին քաղաքականություն չես վարում, հնարավոր չէ ընդհանրապէս տեղեկատվական քաղաքականություն վարել, եթէ ընդհանրապէս քաղաքականություն չես վարում: Այս պայմաններում տարվող տեղեկատվական քաղաքականությունն ընդամենը փուչիկներ է ստեղծում, որոնք էլ շուտ պայթելու գեշ սովորություն ունեն:

Ցավալի է, բայց փաստ՝ վերջին 12 տարում ԼՂՀ-ն կորցրել է իր իրավասուբյեկտությունը ոչ միայն բանակցային գործընթացում, այլեւ ընդհանրապէս քաղաքականության մեջ: Միջազգային ճանաչում տենչող պետությունը չունի նույնիսկ սովետական ժԷԿ-ի չափի ինքնուրույնություն, եւ ոչ մի որոշում չի ընդունվում առանց Հայաստանի դեկլարության հավանության: ԺԷԿ-ը նշում էմ ոչ պատահականորեն, որովհետեւ վերջին 1-2 տարվա ընթացքում մենք քաղաքական կամք չունեցանք նույնիսկ սովորական տեղեկանք տրամադրել մարդկանց: Նկատի ունեմ ժիրայր Սէֆիլյանին ու Սարգիս Հացպանյանին, արցախյան պատերազմի երկու երախտավորի, որոնց ծանր պահին մենք ոչ միայն սատար չկանգնեցինք, այլեւ հասարակ տեղեկանք անգամ չտվեցինք առ այն, որ նրանք մասնակցել են արցախյան պատերազմին եւ պարգւեններ ունեն: Սա ողբերգազավեշտի մի երեսն է միայն: Իսկ երկրորդ երեսն այն է, որ այս մասին չի խոսում արցախյան ոչ մի լրատվամիջոց:

Վերջում կուզենայի ուշադրություն բեւեռել բնաբանի սոլոնյան մտքին, կամ, ավելի ստույգ, դերաբաշխում անել: Անտիկ իմաստունի «կամ-կամ»-ը հարկ է իրարից գատել: Առաջին «կամ»-ը, այն է՝ հիմարը, սովորաբար հանրությունն է լինում, շարքային մարդիկ, որոնք չեն ուզում օգտվել իրագել լինելու իրենց իրավունքից, իսկ երկրորդ «կամ»-ը, այն է՝ հանրության շահերին հակասող նպատակներ հետապնդողը, լինում է իշխանությունը: Ընդամին, իշխանությունը կարողանում է նման նպատակներ հետապնդել միայն այն պատճառով, որ մենք հրապարակային բաց քննարկում չենք պահանջում եւ չենք հասնում դրան, այսինքն՝ մեր իսկ հիմարությունն է, կամ, դարաբաղցու ասած, մեր իսկ դանգլայությունն է սույն վիճակի պատճառը: Ուրիշ մեղավոր պետք չէ փնտրել:

# Խնդիրը դժվար է, բայց նպատակը ճիշտ է

## Կիմ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Արցախի ժուռնալիստների միության նախագահ  
Ստեփանակերտ

ԼՂՀ անկախության հռչակումից հետո Ղարաբաղում լրատվական դաշտը տեսանելի փոփոխություններ է կրել: Ամենից առաջ դա արտահայտվել է լրատվամիջոցների կտրուկ աճով, որովհետև պետականներին զուգահեռ՝ ի հայտ են եկել կուսակցական, գերատեսչական, մասնավոր թերթեր ու ռադիոկայաններ: Լրատվադաշտի կայացմանը նպաստող գործոն կարելի է համարել նաև համապատասխան օրենքների ընդունումը՝ օրենսդրական մարմնի կողմից, որը հնարավորություն է տվել վերացնել գրաքննությունն ու երկրում ձեռավորել ազատամտությունը նշող սանդղակ: Այս ամենը, սակայն, հազիվ թե կարելի է լիարժեք բավարար համարել. խնդիրներ կան և դրանք բազմազան են:

Փորձենք անդրադառնալ դրանցից մի քանիսին:

Հրատարակվող թերթերն ունեն նվազ բաժանորդագրություն: Դրա մի պատճառը պայմանավորված է տպագրված օրինակների իրացման դժվարություններով: Բացառությամբ «Ազատ Արցախ» հանրապետական և «Լուսարար» կրթամշակութային թերթերի՝ մյուս պարբերականները շրջաններում, հատկապես ծայրամասային բնակավայրերում համարյա չեն ստանում: Հանրապետության գյուղերի գերակշիռ մասում քիչ տեղեկություն ունեն տեղական (նաև հայաստանյան) մյուս լրատվամիջոցների գոյության մասին: Ինտերնետի անմատչելիության պատճառով շրջաններում բնակչությունը զրկված է նաև թերթերի էլեկտրոնային տարբերակներին՝ կամ էլեկտրոնային լրատվամիջոցներին ծանոթանալու հնարավորությունից:

Մամուլի առաքման գործով զբաղվող կազմակերպությունները մասնաճյուղեր չունեն տեղերում: Տպագիր արտադրանքին նաև շրջանների բնակչությանը ծանոթացնելու համար որոշ խմբագրություններ ստիպված են լինում տպաքանակի զգալի մասն անհատույց տարածել գյուղերում, քանի որ համապատասխան միջոցներ չունեն տեղերում դրանց վաճառքն իրականացնող անձնակազմ պահելու: Բայց անգամ անհատույց տարածումից, չվաճառած արտադրանքի համար, շահութահարկ է գանձվում:

Հրատարակչական ծախսերը եկամուտների համեմատ զգալիորեն ավել են: Տպագրատների կողմից սահմանված կամայական գների արդյունքում տպագրական ծախսերը շուրջ երկու անգամ ավելի թանկ են նստում խմբագրությունների վրա: Թերևս, նաև այդ պատճառով է, որ որոշ լրատվամիջոցներ, չդիմանալով ֆինանսական ծանրաբեռնվածությանը, հրատարակվելուց կարճ ժամանակ անց փակվում կամ ժամանակավորապես դադարեցնում են գործունեությունը:

Եթե տարիներ առաջ ԼՂՀ-ում լույս տեսնող պարբերականների զգալի մասը սուբսիդավորվում էր պետության կողմից, ապա ներկայումս քչերն են օգտվում նման հնարավորությունից: Մի շարք երկրներում կիրառվում է պետական բյուջեի որոշակի տոկոսը ոչ պետական լրատվամիջոցներին հատկացնելու պրակտիկան՝ ելնելով խմբագրությունների հայտերից: Ղարաբաղի պարագայում, պետական աջակցությունները շեշտված անհրաժեշտություն ունեն, որովհետև հազիվ թե գտնվի մի խմբագրություն, որն ունակ լինի սեփական եկամուտներով փակել հրատարակչական ծախսերը:

Հասկանալով համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ կապված դժվարությունները, միեւնույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում նման հայտ ներկայացրած թերթերի սուբսիդավորումը: Հատկապես այն թերթերը, որոնք լայն մասսայականություն են վայելում և ունեն առնվազն 1000 օրինակ մշտական տպաքանակ, պետք է սուբսիդավորվեն առաջին հերթին:

Խմբագրություններում ցածր է լրագրողների աշխատավարձը, մասնավորապես՝ քաղծառայության աշխատողների աշխատավարձի միջին չափի համեմատությամբ (լրագրողների դեպքում, առանց հոնորարային հավելավճարների, այն կազմում է 65-75 հազար դրամ, իսկ ԼՂՀ-ում քաղաքացիական ծառայությունում ընդգրկվածների աշխատավարձի միջինը 100.000 դրամի սահմաններում է): Ցածր աշխատավարձն ուղղակիորեն անդրադառնում է լրագրողների պրոֆեսիոնալ մակարդակին, քանզի նյութական բավարարվածությունը կարելու խթան է մասնագիտական որակի բարձրացման շահագրգռություններում:

Խոսելով լրագրողական ցածր պրոֆեսիոնալիզմի մասին, արժե միաժամանակ նշել, այսպես կոչված, մասնագետների գերաճի մասին: Ամեն տարի ԼՂՀ-ում գործող բուհերը տասնյակ լրագրողներ են «թողարկում»: Արտադրանքը մի քանի անգամ գերազանցում է պահանջարկը, եւ սա լուրջ խնդիր է դարձել: Խնդիրը հատկանշվում է նաեւ նրանով, որ հրատարակվող պարբերականները հիմնականում լույս են տեսնում ամիսը մեկ-երկու, լավագույն դեպքում՝ շաբաթը մեկ անգամ (բացառությամբ «Ազատ Արցախ»-ի, որը լույս է տեսնում օրումեջ) պարբերականությամբ:

Եթե տպագիր մամուլի քանակի մասին, թեկուզ վերապահումներով, խոսելու տեղ կա, ապա եթերային լրատվամիջոցների առումով վիճակն ավելի անմխիթար է: ԼՂՀ-ում գործում է միայն մեկ՝ Արցախի հանրային հեռուստատեսությունը, այն էլ ընդամենը օրական երեք ժամ հեռարձակումով: Չկա հեռուստատեսություն մրցակցային մթնոլորտ, իսկ առանց մրցակցության՝ էֆեկտիվության բաղադրիչները թույլ ազդեցություն են ունենում եթերի բարելավման վրա: Այս մասին վերջերս Ստեփանակերտում տեղի ունեցած կլոր սեղանի ժամանակ արտահայտվել է նաեւ հանրային հեռուստատեսության գլխավոր խմբագիրը, եւ դժվար է չհամաձայնվել նրա հետ:

Մտավորապես նույն վիճակն է տիրում ռադիոներում: Արցախի հանրային ռադիոն, որ նույնպես հեռարձակվում է ամենօրյա երեքժամանոց պարբերականությամբ, փաստորեն, այս բնագավառում միակ տեղեկատվական միջոցն է հանդիսանում: Անշուշտ, կան մասնավոր ռադիոկայաններ, բայց դրանք կոմերցիոն-ժամանցային են, չունեն հեղինակային լրատվական թողարկումներ եւ, բնականաբար, այդ ռադիոխմբագրություններում լրագրողներ չեն աշխատում: Մասնավոր ռադիոկայանները գոյատևում են բացառապես գովազդների հաշվին, մինչդեռ անվիճելի փաստ է, որ գովազդային շուկան հատկապես ռադիոյում շատ աղքատ է: Բնչու, օրինակ, չսուբսիդավորել մասնավոր ռադիոկայաններին, որպեսզի վերջիններս կարողանան տեղեկատվական թողարկումներ եւս տեղադրել իրենց եթերում: Ի վերջո, ռադիոն նաեւ էքստրեմալ դեպքերում բնակչությանը հրատապ հաղորդագրություններ մատուցելու զանգվածային միջոց է, որի նշանակությունը ռազմա-գաղափարական հակամարտության ռեժիմում գտնվող ԼՂՀ-ի համար հատուկ կարելուոված է:

Լրատվամիջոցներում աշխատող լրագրողների մեծ մասը պատերազմի բովով ուղղակի, թե անուղղակի անցել է, կրել հետպատերազմյան անցումային շրջանի դժվարությունները: Դրանց անդրադարձումների արդյունքը սրտանոթային, նյարդային համակարգի եւ այլ հիվանդություններն են: Եթե այս ամենին ավելացնենք հակամարտության գոտում նրանց մշտական գործունեությունը եւ մասնագիտական աշխատանքի յուրահատկությունները, ապա անհրաժեշտություն է դառնում լրագրողներին սոցիալական որոշակի արտոնություններով օժտելը, ասենք՝ արտոնյալ պայմաններով առողջարանների ուղեգրեր հատկացնելու ձևով:

Լուրջ խնդիր է նաեւ տեղական էլեկտրոնային լրատվամիջոցների բացակայությունը: Ադրբեջանի հետ տեղեկատվական պատերազմում, քարոզչության տեսանկյունից, էլեկտրոնային բազմալեզու լրատվամիջոցների հիմնումը նույնպես պահանջված է: Այստեղ պետական միջամտությունն անհրաժեշտ է, որովհետեւ էլեկտրոնային թերթերը բաժանորդագրման ենթակա չեն, իսկ զուտ գովազդային եկամուտները կարող են անբավարար լինել խմբագրության նյութական գոյատևման համար:

ԼՂՀ-ում չկա տեղեկատվական դաշտի համակարգման պետական առանձին մարմին, ինչպիսին որ գոյություն ուներ 1990-ական թվականներին ի դեմս մամուլի դեպարտամենտի: Համակարգումը

հնարավորինս տեղի է ունենում կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության ջանքերով, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների (Ստեփանակերտի մամուլի ակումբ եւ Արցախի ժուռնալիստների միություն) միջոցով: Այս ձեւաչափերը կանոնակարգվեն եւ պատասխանատվության ու իրավունքների ուղղակի համակարգ չեն ենթադրում: Թերեւս, ժամանակն է ստեղծել առանձնացված, պետական լիազորություններով օժտված ինքնուրույն կառույց:

Մենք ունենք խնդիր՝ անկախ մամուլի, ազատ խոսքի աստիճանական կայացման: Պետության անելիքներն այստեղ շատ չեն կարող լինել, որովհետեւ լրագրողն ինքը պիտի ներքուստ ազատ լինի: Աշխարհում ոչ մի լրատվամիջոց համապարփակ իմաստով անկախ չէ, ամենուրեք էլ լրատվամիջոցները ֆինանսապես կամ գաղափարապես կախված են իրենց հրատարակիչներից: Քանի որ Ղարաբաղում գործող ՁԼՄ-ները հիմնականում սնվում են պետական միջոցներից, ուստի տրամաբանական է, որ պետությունը որոշակի վերահսկողություն է իրականացնում իր գաղափարաբանության իրացման տարածքում:

Այլ հարց է, որ լրագրողի խոսքը քաղաքական, հանրային դաշտում դեռեւս այն նշանառությունը չունի, ինչպիսին ցանկանում ենք: Առանց մեղավորներ փնտրելու՝ պետք է ձգտենք սեփական գրչով գծել մեր մտածողության ազատության սահմանը:

Խնդիրը դժվար է, բայց ճիշտ նպատակ է:

## Համաշխարհային ճգնաժամը եւ տեղեկատվական քաղաքականությունը

### Գրիգորի ԱՖԱՆԱՍՅԱՆ

Արցախի պետական համալսարանի դասախոս  
Ստեփանակերտ

Աշխարհում վերջերս տեղի ունեցած եւ բոլոր երկրների ու ժողովուրդների շահերը շոշափած իրադարձությունը, ըստ շրջանառված կարծիքի, անվանում են ֆինանսատնտեսական ճգնաժամ: Թեւեւ սա համընդհանուր հոգեւոր ճգնաժամի դրսեւորումներից մեկն է, երբ հասկացություններն ու պատկերացումներն այլեւս չեն համապատասխանում փոփոխված իրականությանը: Խորհրդային Միության փլուզումն ու դրան հաջորդած դեպքերը, ներառյալ բեռլինյան փլված պատը, Ղարաբաղի, Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրի նման նորանկախ երկրների հայտնվելն աշխարհի նոր «ջահելացման» առաջին ու նախնական փուլն էր: Հոգեւոր ոլորտում սույն տեղեկատվական ու տեխնոլոգիական գործընթացները, խթանելով զարգացումը, հանգեցնում են նաեւ տնտեսական փոփոխությունների: Դրանց փոխկապակցվածությունն անվիճելի է:

Գլոբալ փոփոխությունների արդյունքում բազմազգ Ռուսաստանը նոր բեւեռ է դառնում արդեն բազմաբեւեռ աշխարհում: Նման առաքելության համար նա ունի համապատասխան մտավոր ու հոգեւոր, ինչպես նաեւ էներգետիկ ներուժ: Դա ռուս ժողովրդի հոգեւոր մեծ էներգիան է, որն իր մեջ ներառել ու մարմնավորել է ազատության սկզբունքը, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս բնակվող փոքր ու մեծ ժողովուրդների հույսերն ու երազանքները: Հանրային գիտակցության մեջ այս արարող-ավերիչ թռիչքաձեւ զարգացումները՝ կանոնակարգումից դեպի քաոս եւ ընդհակառակը, համաշխարհային պատմության մեջ հանգեցրել ու հանգեցնում են սարսափելի, ահավոր հետեւանքների՝ պատերազմներ, գունավոր հեղափոխություններ եւ այլն: Հանրային գիտակցության եւ ժողովուրդների ինքնագիտակցության զարգացումը, տեղեկատվության եւ գիտելիքների կուտակված այս ամբողջ «ուղեբեռը» հնարավորություն է տալիս միասին ու համատեղ լուծելու պետությունների միջեւ ծագող հիմնախնդիրները: Եթե այլ կերպ ընկալենք կատարվող դեպքերը եւ փորձենք արտածել շարժման հավասարումը, ապա հիմնական փոխկապակցված գործող անձինք կլինեն՝ «Բնությունը» ի դեմս

գիտելիքների ուժի (Z), Մարդը՝ իրեն հատուկ մտածողության իներցիայով (♀) Հանրությունը՝ փոփոխվող էներգետիկ հզորություններով (Y) եւ Անհրաժեշտության (I) հանդեպ պատահականության (H) հարաբերակցությունն արտացոլող գործակիցը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն արագացնում է անցումը կանոնակարգված համակարգի, պետության կողմից տնտեսության ամբողջ ճյուղերի վերահսկողությունը վերցնելուն: Նույն այդ ջանքերը հանգեցնում են վարչահրամայական համակարգի պատասխանատվության ուժեղացմանը, դրան զուգահեռ առաջ բերելով վստահություն ու հույս: Եթե փողը դիտարկելու լինենք էներգիայի տեսքով (իսկ հանրությունը դրա վրա է խարսխված), ապա ոչնչով չապահովված կարծեցյալ փողերի, իմա՝ կարծեցյալ էներգիայի «արդյունահանումը» հանգեցնում է ինքնավերիչ էկոնոմիկայի: Պահանջարկի եւ առաջարկի՝ զարգացման այդ ցուցիչների բալանսի խախտումը ժամանակի ընթացքում անդրադառնում է բոլորի վրա, անկախ այն բանից, թե մարդ որտեղ է գտնվում եւ ինչով է զբաղվում: Ճգնաժամին զուգահեռ ու դրան համահունչ տեղի է ունենում անհրաժեշտ միջոցների ու հակամիջոցների պարբերաբար փոփոխում:

Սակայն, մյուս կողմից էլ, արհեստական բոլոր այն խոչընդոտները, ինչպիսին են, օրինակ, ամբողջ պետությունների ու ժողովուրդների շրջափակումն ու խտրականության այլ դրսևորումներ, պիտի ի չիք դարձվեն: Ժողովուրդների հակադրումը եւ ազգայնամոլության խստացումը հանգեցնում են բումբերանգի էֆեկտի, մարդկանց իրարից հեռանալուն ու փոխադարձ անվստահությանը: Հավատն ու վստահությունը բնականոն գործող քաղաքացիական հասարակության եւ դրա վրա խարսխված պետականության հիմնական գործոններն են: Ինքնորոշման իրավունքը, որ տվյալ տարածքում ապրող փոքր ժողովրդի միանգամայն բնական ռեակցիան է ու ինքնապահպանման բնագրի դրսևորում, կարևորագույն նշանակություն ունի եւ սրվում է հատկապես ճահճացած համակարգերի ինքնառնչացման ժամանակաշրջաններում, որի դեպքում փլուզվում է ամեն ինչ: Ճգնաժամերի ժամանակ, երբ համաշխարհային համակարգը հունից դուրս է գալիս, տեղի է ունենում պարտադրված արժեքների, գաղափարախոսության վերագնահատում: Ժամանակի ընթացքում համակարգը վերադառնում է իր հավասարակշռությանը, բայց ավելի բարձր աստիճանում, եւ ամեն մարդ, ընտանիք ու ժողովուրդ անցնում են զարգացման այս դժվարին, բայց անհրաժեշտ ուղին:

Սույն գործընթացները հասկանալու եւ համապատասխան վերաբերմունք ձեւավորելու համար անհրաժեշտ է տանել մտածված տեղեկատվական քաղաքականություն, որը թույլ կտա ճիշտ գնահատել դեպքերի զարգացումը եւ իրավիճակից ելք գտնել՝ հասարակության զարգացման բանաձեւին համապատասխան:

## Տեղեկատվական հասարակության նախադրյալները Հայաստանում

### Հրաչ ԲՆՅԱՂՅԱՆ

Մշակութաբան

Երեւան

Շատ ընդհանուր ձեւով՝ տեղեկատվական հասարակությունը (ՏՀ) հասարակական կեցության մի եղանակ է, որը բնորոշ է հետարդյունաբերական դարաշրջանի գլոբալացող աշխարհին, որտեղ աննախադեպ տարածում եւ կարևորություն են ստացել տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ): Իբրեւ հասկացություն այն օգտակար է առնվազն մերօրյա հասարակություններում կատարվող տարաբնույթ փոփոխությունները մի ընդհանուր տեսանկյունից ընկալելու, տեսնելու համար տարբեր իրողությունները փոխադարձ կապակցության եւ որոշակի հավանական հեռանկարի մեջ:

Այս միտքը կարելի է պարզաբանել Հայաստանին բնորոշ մի օրինակով: Վերջին տարիներին մեր երկրում շատ է խոսվում տեղեկատվական տեխնոլոգիաների եւ ծրագրային ապահովման արդյունաբերության զարգացման եւ դրա ընդհանուր տնտեսական հեռանկարների մասին: Այս ոլորտը հայտարարվել է երկրի տնտեսության գերակա ճյուղ, որի խնդիրները պարբերաբար քննարկվում են կառավարության կողմից, քաղաքական եւ տեխնոկրատ մտավորականության շրջանակներում: Ծրագրային ապահովման եւ համակարգչային տեխնոլոգիաների արտահանման արդյունաբերության զարգացումն այս առումով ստանում է քաղաքական նշանակություն, կապվում երկրի տարածաշրջանային մրցունակության եւ ընդհանուր տնտեսական առաջընթացի հետ:

Գլոբալացման սպառնալիքների պայմաններում ազգային մշակույթի ու մշակութային ինքնության հետ կապված խնդիրների շուրջ ընթանում է մեկ ուրիշ բանավեճ՝ հիմնականում հումանիտար մտավորականության մասնակցությամբ: Այստեղ նույնպես խնդրո առարկան համազգային նշանակություն ունի, թեեւ անտեսված է իշխանությունների կողմից մասնավորապես այն պատճառով, որ չունի բացահայտ տնտեսական նշանակություն, ընդհակառակը՝ պահանջում է լուրջ ուշադրություն եւ միջոցներ: Պարադոքսային է, որ այս երկու քննարկումները բնավ չեն հատվում, եւ այս երկու տիրույթների փոխկապակցվածությունը մնում է չնկատված եւ չվերլուծված: Այնինչ կենսական կարեւորություն ունեցող այս երկու խնդիրները տեղեկատվական դարաշրջանին բնորոշ միեւնույն ընթացքի տարբեր ասպեկտներն են, եւ հասարակության տեղեկատվական կարողությունները մշակույթի փոխակերպման եւ վերապրումի կարեւորագույն գրավականներ են: Միեւնույն ժամանակ, հենց սոցիալական-մշակութային համատեքստում են ծնվում այն ազդակները, որոնք խթանում են հասարակության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների տարածման ու օգտագործման արդյունավետ ընթացքը:

Այժմ կարող ենք ավելացնել եւս մեկը՝ «Տեղեկատվական պատերազմների» թեման, կամ ավելի ընդհանուր՝ երկրի տեղեկատվական անվտանգության խնդիրը: Ահա մի նոր ասպեկտ, որի քննարկումը շատ բան կշահի, եթե կատարվի տեղեկատվության դարաշրջանին բնորոշ մի շարք այլ ընթացքների հետ իր առնչությունների մեջ՝ համատեղելով մտավորականության տարբեր խավերի գիտելիքներն ու փորձագիտական կարողությունները: Մասնավորապես, օգտակար կլինի մտածել այն մասին, թե ինչպես կարող են կապվել տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման այս կամ այն սցենարը տեղեկատվական պատերազմների հարցի հետ: Որքանո՞վ է նպաստում Հայաստանի տեղեկատվական անվտանգությանը տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության կենտրոնացումն արտահանման արդյունաբերության զարգացման վրա, որի անխուսափելի հետեւանքը ներքին շուկայի կարիքների անտեսումն է:

Հաճախ կարելի է լսել, որ այսօր ցանկացած հասարակություն այս կամ այն չափով տեղեկատվական է՝ անկախ տնտեսական եւ սոցիալական զարգացման մակարդակից: Հասկանալի է՝ ժամանակակից տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաներն աստիճանաբար տարածվում եւ օգտագործվում են ամենուրեք, իսկ գլոբալացման ընթացքը փոխում է ամենաավանդական եւ պահպանողական հասարակություններն ու մշակույթները: Սակայն այս տարերային ընթացքի հետ միասին, նախորդ դարի իննսունականներից սկսած, տեղեկատվական հասարակության կառուցման ազգային ծրագրեր են մշակում եւ իրականացում առավել զարգացած երկրները եւ նրանց հետեւող մի շարք զարգացող երկրներ: Այսինքն՝ եթե ոչ ՏՀ-ի կառուցման, ապա ՏՀՏ-ի տարածման եւ զարգացման ազգային ռազմավարություններն ունենալն այսօր ավելի շուտ նորմ է, քան բացառություն: Ազգային ծրագրերը սովորաբար զուգակցվում են ավելի ընդարձակ տարածաշրջանային եւ միջազգային ծրագրերի հետ: Մի հանգամանք, որը թե՞ բնութագրական է ժամանակակից փոխկապակցված աշխարհի համար, թե՞ գրեթե անհրաժեշտ պայման՝ ազգային ծրագրերի հաջող գործադրման համար:

Առաջին անգամ նման ծրագրերի հետ Հայաստանի Հանրապետությունն առնչվել է 1990-ականների երկրորդ կեսին «ԱՊՀ-ի անդամ երկրների միասնական տեղեկատվական տարածության կառուցման հայեցակարգի» (1995թ.) շրջանակում՝ մասնակցելով հայեցակարգին կից «Հեռանկարային պլանով» նախատեսված որոշ ծրագրերի իրականացման աշխատանքներին: Այս մասնակցությունն ավելի շատ

Ռուսաստանից եկող որոշակի քաղաքական պարտադրանքի արդյունք էր, քան Հայաստանի համար օգտակար աշխատանք կատարելու հնարավորություն: Վերջին տարիներին, Եվրախորհրդի անդամ դառնալուց հետո, Հայաստանը կարող է գործուն մասնակցություն ունենալ եվրոպական բազմաթիվ ծրագրերի մեջ, որոնք նախատեսված են նաև նախկին խորհրդային հանրապետությունների համար եւ այս կամ այն ձևով առնչվում են ՏՀ-ի կառուցման եվրոպական ընդհանուր նախաձեռնությանը: Այս դեպքում պարտադրանք չկա, բայց կան լավ հնարավորություններ, որոնք միջև այժմ, ցավոք, մնում են բոլորովին չօգտագործված:

Եւս մեկ իրադարձություն, որի մասին այս առնչությամբ հարկ է խոսել: 2003 թվականի դեկտեմբերին Հայաստանը մասնակցեց Տեղեկատվական հասարակության հարցերին նվիրված Ժնևի համաշխարհային գագաթաժողովին եւ դարձավ տեղեկատվական հասարակության կառուցման գլոբալ նախաձեռնության մասնակից: Այս նախաձեռնությունն առայժմ առավելապես դեկլարատիվ բնույթ ունի: Այստեղ չկան նոր գաղափարներ կամ մոտեցումներ. հիմնական հասկացություններն ու դրույթները լավ ծանոթ են ԱՄՆ-ի, Եվրամիության եւ այլ ծրագրերից: Ըստ էության, այն ՏՀ-ի կառուցման ամբողջական ծրագիր չէ (եւ չէր էլ կարող լինել, քանի որ վերաբերում է մեծ քանակությամբ միանգամայն տարբեր երկրների), այլ մի շարք ընդհանուր սկզբունքների բազմություն:

Ժամանակը ցույց կտա, թե ինչ ճակատագիր կունենա այս «գլոբալ նախաձեռնությունը», բայց այսօր այն, թվում է, կարող է ավելի շատ ծառայել ՏՀՏ-ի գլոբալ շուկայի ընդարձակմանը (ուստի՝ անդրազգային կապիտալի շահերին), քան աղքատ եւ թերզարգացած երկրների բարգավաճմանը, ինչպես հավակնում կամ ներկայանում է:

Մյուս կողմից՝ այս նախաձեռնությանը որեւէ երկրի մասնակցությունը ենթադրում է համապատասխան ազգային ծրագիր, որ Հայաստանն առայժմ չունի: Վերը նշեցի, որ ազգային ծրագրերի հաջողությունը պայմանավորված է համագործակցության միջազգային ծրագրերին երկրի մասնակցությամբ: Բայց ճիշտ է եւ հակառակը. համագործակցության ծրագրերը շատ քիչ բան կարող են տալ, եթե երկիրն ազգային ծրագիր չունի:

2008 թվականի գարնանը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հրապարակ հանվեց Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման նոր հայեցակարգ, որը փորձում է ներկայացնել նաև ՏՀ-ի կառուցման հարցը: Հնարավորություն չունենալով մանրամասն անդրադառնալու այդ փաստաթղթին՝ այստեղ կարող եմ միայն արձանագրել, որ այն շարունակում է նախկինում մշակված եւ արագ մոռացված փաստաթղթերի շարքը եւ ոչ մի նոր բան չի խոստանում:

Այսպիսով՝ մեր առաջին եզրակացությունը կլինի այն, որ մինչև օրս Հայաստանը չունի ոչ միայն ՏՀ-ի կառուցման, այլ նույնիսկ ՏՀՏ-ի տարածման եւ զարգացման պատշաճ ազգային ռազմավարություն կամ գոնե հիմնական սկզբունքների մի խումբ՝ արձանագրված եւ ստանձնված երկրի կառավարության կողմից: Երկրի իշխանությունների կրավորական կեցվածքի պատճառով գործողությունների ասպարեզը տարիներ շարունակ տնօրինել են միջազգային եւ օտարերկրյա կազմակերպությունները՝ Միացյալ ազգերի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ), Համաշխարհային բանկը (ՀԲ) եւ այլն:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանում իրականացվող բոլոր ծավալուն ծրագրերը, որոնք այս կամ այն ձևով կապված են ՏՀՏ-ի տարածման եւ օգտագործման հետ, միջազգային եւ օտարերկրյա (հիմնականում՝ ամերիկյան) կազմակերպությունների նախաձեռնության արդյունք են: Ընդ որում՝ դա վերաբերում է բոլոր ոլորտներին: Ծրագրային ապահովման արդյունաբերության զարգացման գործում նշանակալի է ՀԲ-ի դերակատարությունը, ՏՀ-ի զարգացմանը նպաստող ծրագրեր է իրականացնում ՄԱԶԾ-ն, իսկ դպրոցական համակարգի՝ համակարգիչներով եւ ինտերնետային կապով ապահովելու գործում մինչև վերջերս հիմնական դերակատարը եղել է ամերիկյան «Փրոջեքթ Յարմոնի» կազմակերպությունը (այս թվարկումը կարելի է շարունակել): Ֆինանսական միջոցների բացակայությունը չէ հիմնական հանգամանքը, որ բնորոշում է Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը: Հիմնականը գիտելիքների, փորձագետների, մասնագետների եւ ըստ այդմ՝ սեփական մոտեցումների եւ սկզբունքների անբավարարությունը կամ բացակայությունն է: Այլապես՝ նույնիսկ միջազգային կազմակերպությունների

իրականացրած ծրագրերը կարող էին հասարակական առումով լինել շատ ավելի արդյունավետ եւ հետագա զարգացումների առումով՝ ավելի նպաստավոր: Հայաստանի կառավարության եւ համապատասխան գերատեսչությունների ավելի ակտիվ դիրքորոշումը ժամանակի ընթացքում կօգնէ նաեւ ձեւավորել ազգային ծրագրերի ստեղծման համար անհրաժեշտ պայմաններ: Հայաստանյան իրադրության ընդհանուր ուրվագիծը ներկայացնելուց հետո կբավարարվեն պարզապես թվարկելով SՀ-ի կառուցման որոշ նախադրյալներ (կամ ընդգծելով դրանց բացակայությունը)՝ կատարելով պարզաբանումներ եւ մեկնաբանություններ:

Առաջին հերթին պետք է ընդգծել SՀ-ի հետ կապված հիմնական հարցերի եւ խնդիրների չզիտակցվածությունը՝ թե՞ հասարակության, թե՞ իշխանության կողմից: Չկան հասարակագիտական ուսումնասիրություններ եւ քննարկումներ, չկան պատշաճ փորձագիտական կարողություններ: Կարելի է ասել՝ այս հարցերը գրեթե ամբողջովին դուրս են հայաստանյան հասարակության օրակարգից:

Զարմանալի չէ, ուրեմն, որ Հայաստանում մինչեւ օրս չի մշակվել ոչ միայն SՀ-ի կառուցման ազգային ռազմավարություն, այլեւ չկան SՀS-ի տարածման, օգտագործման եւ զարգացման ծրագրեր եւ քաղաքականություններ:

Ազգային ծրագրերի բացակայությունը ըստ էության ձեւական է դարձնում Հայաստանի մասնակցությունը միջազգային այնպիսի նախաձեռնությունների, ինչպիսին SՀ-ի կառուցման գլոբալ նախաձեռնությունն է (Բնեւ, 2003): Այս ամենը թույլ է տալիս պնդել SՀS-ին վերաբերող հարցերում Հայաստանի՝ միջազգային կազմակերպություններից եւ անդրազգային կապիտալից աճող կախվածության մասին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների՝ կառավարության մակարդակով հովանավորվող եւ ուղղորդվող արդյունաբերության ճյուղի զարգացման ներկա ձեւերը եւ մակարդակը թույլ չեն տալիս խոսել մոտ ապագայում որեւէ նշանակալի տնտեսական կամ սոցիալական առաջընթացի մասին: Մասնավորապես, ծրագրային ապահովման արտահանման արդյունաբերության զարգացումը, որի վրա կենտրոնացվել են Հայաստանի կարողությունները, մի կողմից՝ չի կարող տնտեսական լուրջ տեղաշարժերի պատճառ դառնալ (այն ստեղծում է միայն «բարեկեցության կղզյակներ»), իսկ մյուս կողմից՝ երկրի ուժերը եւ պաշարները կենտրոնացնում է արտահանման վրա՝ նվազագույնի հասցնելով ներքին շուկան զարգացնելու, SՀS-ն տեղական սոցիալական եւ մշակութային նպատակներին ծառայեցնելու հնարավորությունները:

Այդուհանդերձ, պետք է հիշատակել հասարակության կողմից, ինչպես նաեւ տարբեր ասպարեզներում (օրինակ՝ կրթության ոլորտում կամ պետական կառավարման համակարգում) ինտերնետի տարածման եւ օգտագործման աճը, որ նկատվում է վերջին մի քանի տարում (այլ հարց է, թե ինչ նպատակներով եւ ինչպես), բայց միաժամանակ ընդգծելով այս ճանապարհին ընկած բազմաթիվ խոչընդոտների առկայությունը: Այս առնչությամբ՝ հարկ է ընդգծել բջջային հեռախոսների սրբթաց տարածման փաստը, որը, իմ կարծիքով, Հայաստանի հասարակության օրակարգից գրեթե դուրս մղեց Ինտերնետի հետագա զարգացման եւ ավելի խորացված ձեւերով (ոչ առեւտրային, այլ, օրինակ, կրթական նպատակներով) օգտագործման հարցը:

Ընդհանուր առմամբ՝ այսօր դժվար է խոսել Հայաստանում SՀ-ի հեռանկարների մասին այն պատճառով, որ ներկա իրադրությունը խիստ հակասական է. լուծման սպասող կարեւորագույն խնդիրների հսկայական բանակը բոլորովին ստվերում է թողնում ընթացիկ տեղաշարժերի դրական կողմերը: Ինչ խոսք՝ տեղեկատվական դարաշրջանում տեղեկատվական անվտանգության կամ տեղեկատվական պատերազմների հարցը ինքնաբերաբար կապվում է SՀS-ի ասպարեզում երկրի վարած քաղաքականության հետ: Թվում է, թե այսպիսի բարդ եւ խճճված պայմաններում Հայաստանի համար տեղեկատվական անվտանգության հարցի ձեւակերպումն անգամ պետք է հանդիպի բազմաթիվ դժվարությունների:

# Տեղեկատվական պատերազմի մի քանի միջեր

## Մամվել ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տեղեկատվական անվտանգության գծով փորձագետ  
Երևան

Վերջին ժամանակներս Հայաստանում գնալով խիստ արդիական են դառնում տեղեկատվական անվտանգության թեման իր բոլոր դրսևորումներում, ինչպես նաև, այսպես կոչված, տեղեկատվական պատերազմը: Քարոզչության, փիարի եւ նմանատիպ երևույթների մասին վեճերն այսօր ցանկացած ինտելեկտուալ շրջապատի առանցքն են:

Այս երևույթների շուրջ յուրատեսակ աժիտաժային հետաքրքրությունը կյանքի է կոչում նորաձեւ կարծրատիպերի, միջերի մի որոշակի քանակություն, որոնք սկսում են շրջանառվել առանձնակի շահագրգիռ շրջանակներում: Փորձենք նկարագրել որոշ միջեր, որոնք Երրորդ Հանրապետության տվյալ պատմական ժամանակաշրջանում առավել տարածվածներից են:

Թիվ 1 միջ. Տեղեկատվական պատերազմում Հայաստանի հիմնական հակառակորդն Ադրբեջանն է

Իրականում Ադրբեջանը Հայաստանի ամենապարզամիտ, ապաշնորհ ու հեշտ ճնշելի հակառակորդն է: Ադրբեջանական քարոզչությունն այնքան «կացնային» ու անճաշակ է, այնքան միապաղաղ է ու այնքան է ներծծված ազիտայրուպի սովետական մեթոդներով, որ իրենից լուրջ վտանգ չի ներկայացնում: Թեև հասկանալի է, թե ինչու է այս միջը ծագել. Ադրբեջանն առավել տեսանելի ու տարբերվող հիմնախնդիր է: Բայց միշտ չէ, որ ամենաաղմկալիցը նաև ամենավտանգավորն է: Օրինակ, Հայաստանի ու հայության վրա թուրքական տեղեկատվական ճնշումը շատ ավելի նրբահնար, հետևողական ու վնասաբեր է: Բայց ահա քիչ նկատելի է:

Հայաստանի ու հայության վրա տեղեկատվական ազդեցությունն ամբողջության մեջ իրականացվում է լայնածավալ եւ բավականին մեծ թվով հանգուցային կենտրոնների կողմից: Ընդամին, այդ ազդեցությունն իրականացվում է զանազան մակարդակներում, սկսած ամենատեսանելիից՝ ԶԼՄ-ներից, եւ վերջացրած տեղեկատվական դաշտի վրա ամենատեսական ու ամենավտանգավոր ազդեցություններով՝ ակադեմիական շրջանակների միջոցով, ինչը, օրինակ, հանգեցնում է պատմական իրողության համատարած խեղաթյուրման:

Բացի այդ, Հայաստանը հաճախ երրորդ կողմի է վերածվում, որը տեղեկատվական ճնշման տակ է հայտնվում երկու այլ երկրների հակամարտության արդյունքում: Մրա առավել վառ օրինակը հանդիսանում է ռուս-վրացական հակամարտությունը: Չնայած այն բանին, որ Հայաստանին հաջողվել է 2008 թվականի օգոստոսյան պատերազմում չեզոքություն պահպանել, այնուամենայնիվ մեր հանրապետության դեմ տեղեկատվական սադրանքներ իրականացվում էին հակամարտող երկու կողմերից էլ:

Թիվ 2 միջ. բոլոր հայրենասերները պիտի իրենց նվիրաբերեն տեղեկատվական պատերազմին ու քարոզչությանը

Իրականում, համընդհանուր տեղեկատվական «գորահավաքը» եւ ողջամիտ մարդկանց քարոզչության մասնագետներ դարձնելը միանգամայն ողորմելի արդյունքների է հանգեցնում: Արտաքին ու ներքին դաշտերում առկա սողանցքները կարկատելուն միտված քարոզչական հնարքներն անեծք են դառնում հանրության ու կառավարողների վրա: Ուղղույթի (դիսկուրսի) ձեւավորումն ինչ-որ մի պահից անվերահսկելի է դառնում ու չարտոնված՝ գաղափարական հիմնական միջուկի կողմից, ազիտացիայի ու

պրոպագանդայի մոլուցքը սկսում է սողոսկել հանրային կյանքի բոլոր ծակուծուկները: Երբ հանրությունը լիովին ու վերջնականապես կողմնորոշվում է դեպի քարոզչությունը, ապա տեղի է ունենում շեշտադրումների տեղաշարժ եւ շրջակա իրականության ընկալման աղճատում: Եւ զարգացման ուղղորդող վեկտոր են դառնում ոչ թե սեփական դրդապատճառները, այլ հակառակորդի վարմունքի ռեֆլեկտավորումը:

Մեր առջև ադրբեջանական հանրության կենդանի օրինակն է, երբ վերելից իջեցված հանձնարարականներով փորձում են ամենքին ու ամենուր ստիպել ցանկացած առիթով հակահայկական քարոզչություն տանել: Հետեւաբար, մենք ունենք մի այնպիսի հանրության օրինակ, որում փաստորեն սեփական բոլոր դրական ու բացասական երեւույթները չափվում են մի չափանիշով՝ իսկ նույնը ինչպե՞ս է հայերի մոտ: Անգամ եթե քիչ կարտոֆիլ է հավաքվել Ապշերոնում, ապա կարելու է ոչ թե հայրենական ամբարներում սույն մթերքի քանակությունը, այլ Ադրբեջանում հավաքած կարտոֆիլի բերքի հարաբերակցությունը Հայաստանում հավաքածի հետ: Եթե տարբերությունը մի միավորից ավել է, ապա ժողովուրդը կարող է հանգիստ քնել:

Թիվ 3 միջ. Քարոզչությունը վատ բան է

Հետխորհրդային տարածքի բնակիչների համար դժվար է այն մտքին հարմարվելը, որ քարոզչությունը կարող է իր մեջ դրականի թեկուզ հատիկ պարունակել: Միեւնույն ժամանակ քարոզչությունը միշտ չէ, որ պիտի պարզունակ գաղափարների կրողը լինի, գաղափարներ, որ հարկ է խցկել սեփական բնակչության, կամ երրորդ կողմի գլուխը: Այս բառերը չափազանց լայն ու լղոզված է: Բայց քարոզչության շրջանակներում է ինչպես Չուչխայի Մեծ գաղափարի մասին քարոզչական պաստառը Հյուսիսային Կորեայից, այնպես էլ ծխելու վնասակարության մասին սոցիալական գովազդը: Քարոզչություն կարելի է անվանել անգամ պատմության դասագրքերը: Տեսականորեն կարելի է հանգել նույնիսկ պոստմոդեռնիստական հայտարարության «Համայն աշխարհը քարոզչություն ու տեղեկատվական պատերազմ է»: Եւ, թերեւս, պարանոյիկ մտածողության մի ինչ-որ կետից սույն ասույթում իրավացի ինչ-որ բան կա:

Թիվ 4 միջ. Քարոզչությունը լավ բան է

Հանրային գիտակցության ձեռնաձուլության ու մեքենայությունների փորձերն իրենց մեջ բարոյական մեծ վնաս են պարունակում: Անգամ եթե այս ձեռնաձուլությունը բարի նպատակներով է իրականացվում, այն իր մեջ ներազդելու տարր է պարունակում շրջանցելով գիտակցությունը: Բացի այդ, ներազդելու մեթոդներն ինքնին բովանդակությանը չեն առնչվում եւ հետեւաբար, պատվիրատուից կախված, կարող են օգտագործվել ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստներով: Իդեալական քարոզչությունն այն է, ինչը նկարագրվում է շատ հակաուտոպիաներում, որտեղ նոր ու սքանչելի աշխարհը կառավարվում է հանրությանը բարու ու վեհի տոտալ ներշնչման մեթոդներով: Ի դեպ, կաթոլիկ եկեղեցին արդեն ունեցել է նման հանրության ստեղծման փորձ Պարագվայում: Ճիզվիտական պետությունը Պարագվայում (1610-1768) մի այնպիսի օրինակելի պետություն էր, որը ձեւավորվել էր քարոզչական բոլոր մեքենայությունների կիրառմամբ:

Թիվ 5 միջ. Քարոզչական պատերազմով միայն պետությունը պիտի զբաղվի

Պետությունն, ինչ խոսք, պիտի ակտիվորեն ներգրավված լինի գլոբալ տեղեկատվական դաշտում: Հակառակ պարագայում ակտիվության բացակայությունը հանգեցնում է այս թափուր տեղերը Հայաստանի ու հայության հակառակորդների տեղեկատվական հոսքերով լրացվելուն:

Միեւնույն ժամանակ, տեղեկատվական ներգործության բոլոր լծակները լրիվությամբ պետության ձեռքը տալը հղի է մի քանի բացասական հետեւանքներով: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Ինքն իրեն թողնված ցանկացած պետական կառույց էնտրոպիայի ազդեցության տակ է հայտնվում եւ կոռումպացվում

2. Ցանկացած հարցում հանրային շահագրգռվածության եւ աջակցության բացակայությունն ինքնին կազմաքանդող գործոն է

3. Պետական կառույցները միշտ էլ ավելի շատ շահեր ունեն երկրի ներսում, քան դրսում: Հետեւաբար, տեղեկատվական ներգործության լծակները, հանրային կառույցների շահագրգիռ համագործակցության բացակայության պարագայում, վաղ թե ուշ սկսում են աշխատել ներքաղաքական ու ներտնտեսական դաշտերում, հեռանալով նախանշված սկզբնական նպատակից:

Բացի այդ, տեղեկատվական ներգործության ոլորտում ակտիվորեն ներգրավված այնպիսի պետությունների օրինակը, ինչպիսին ԱՄՆ-ն ու Իսրայելն են, ցույց է տալիս, որ պետական եւ հանրային կառույցների համագործակցությունը միայն կարող է դրական արդյունքների հանգեցնել այս ոլորտում: Այս մասին է վկայում նաեւ սփյուռքահայ կազմակերպությունների փորձը, որոնք Երրորդ Հանրապետության կազմավորումից դեռ շատ առաջ էին ներգրավված Թուրքիայի դեմ տեղեկատվական պատերազմին:

Եւ, վերջապես, վերջին միջ. տեղեկատվական պատերազմը հետաքրքիր զբաղմունք է Իրականում, հետաքրքիր են տեղեկատվական այն օպերացիաները, որոնք հակամարտող կողմերն իրականացնում են բավականին կարճ ժամանակահատվածում: Իսկ հիմնական աշխատանքը տարվում է նախապատրաստական փուլում, դիտարկման եւ այլ գործողությունների ժամանակ, որոնք դժվար է այլ կերպ անվանել, քան քարացած: Բացի այդ, նշյալ օպերացիաների ստրատեգիաներն ու իրականացնողները առավել հաճախ ստվերում են մնում եւ չեն վայելում փառքի պսակները, ինչպես դա երբեմն պատահում է իրական պատերազմների հերոսների հետ: Այնպես որ, տեղեկատվական պատերազմների նորաձեւ գայթակղությունը, դատելով ամեն ինչից, Հայաստանում շուտով կանցնի: Որովհետեւ քարացած աշխատանք ոչ ոք չի սիրում:

## Տեղեկատվության աղբյուրի գաղտնիության իրավունք

### Շուշան ԴՈՅՂՈՅԱՆ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ  
Երեւան

Լրագրող-տեղեկատվության աղբյուր հարաբերությունները կարելի է համեմատել խոստովանահայր-խոստովանող հարաբերությունների հետ, երբ մի կողմը պարտավորվում է երբեք չբացահայտել իրեն հայտնի դարձած տեղեկությունները եւ տեղեկություն տրամադրողի ինքնությունը: Տեղեկատվության աղբյուրի բացահայտման հարցը եւ՞ էթիկական, եւ՞ իրավական ոլորտում է. այն նախ եւ առաջ լրագրողի բարոյական պարտավորությունն է՝ հարգել տված խոստումը՝ չբացահայտել աղբյուրի ինքնությունը, բայց մյուս կողմից՝ խոստումը կատարելու դեպքում լրագրողի համար կարող են առաջ գալ իրավական լուրջ հետեւանքներ՝ բարձր տուգանքներ, նույնիսկ ազատազրկում: Լրագրողները պատրաստ են կրել այս հետեւանքները՝ պահպանելով իրենց աղբյուրների գաղտնիությունը, քանի որ հակառակ դեպքում պետք է հրաժեշտ տան մասնագիտությանն ընդհանրապես: Չէ՞ որ մեկ անգամ չարաշահելով աղբյուրի վստահությունը՝ մեկընդմիջտ կկորցնեն լրագրողի իրենց համբավը: «Լրագրողներ առանց սահմանի» միջազգային կազմակերպության 2005 թվականի տվյալներով՝ միայն ԱՄՆ-ում 10 լրագրողներ են դատական կարգով հետապնդվում իրենց աղբյուրների ինքնությունը չբացահայտելու համար:

1974 թվականի օգոստոսի 9-ին ԱՄՆ-ի նախագահ Ռիչարդ Նիքսոնի հրաժարականը կարող էր տեղի չունենալ, եթե չլիներ «Վաշինգտոն փոստ» թերթի երկու լրագրողների՝ Կարլ Բերնսթեյնի եւ Բոբ Վուդսվորդի գաղտնի եւ հուսալի աղբյուրը՝ «Խորը կոկորդ» մականունով, որի տրամադրած տեղեկությունների շնորհիվ էր հիմնականում, որ լրագրողներին հաջողվեց բացահայտել նախագահ Նիքսոնի ապօրինի գործարքները եւ սկիզբ առավ Ուոթերգեյթյան սկանդալը: «Խորը կոկորդի» ինքնության

մասին 30 տարի այդպես էլ ոչ ոք ոչինչ չի մացավ, քանի որ լրագրողները խոստացել էին չբացահայտել նրա ինքնությունը: Միայն 30 տարի անց՝ 2005թ մայիսի 31-ին գաղտնի աղբյուրը 90 տարեկան հասակում որոշեց բացահայտել ինքն իրեն՝ Մարկ Ֆելթ, Հետաքննությունների դաշնային բյուրոյի նախկին աշխատակից:

Տեղեկատվության աղբյուրի բացահայտման պահանջը կարող է խիստ վտանգավոր ազդեցություն ունենալ մամուլի ազատության եւ մամուլի միջոցով տեղեկատվություն ստանալու՝ հասարակության իրավունքի համար: Ինչպես նշել է մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ աղբյուրի բացահայտման ցանկացած դեպք կարող է վտանգավոր ներգործություն ունենալ ապագայում այլ աղբյուրների կողմից տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամության վրա՝ անկախ աղբյուրի կողմից տրամադրվող տեղեկատվության բնույթից :

Աղբյուրների գաղտնիությունը պահպանելու սկզբունքը պայմանավորված է մի քանի կարեւոր հանգամանքով: Առաջին՝ լրագրողի գործունեության ընթացքում լինում են դեպքեր, երբ տեղեկություն տրամադրող անձը համաձայնում է խոսել միայն չբացահայտվելու պայմանով: Լրագրողն այս դեպքում, իհարկե, պետք է պարզի աղբյուրի գաղտնի մնալու շարժառիթը, եւ միայն դրանից հետո խոստանա չբացահայտել: Երկրորդ, լրագրողներն իրենց գործունեության ընթացքում շատ հաճախ օգտվում են տեղեկատվության այնպիսի աղբյուրներից, որոնք ցանկանում են գաղտնի մնալ՝ ահագանգելով իրենց հաստատություններում տեղի ունեցող ապօրինությունների մասին: Արտահոսված տեղեկությունն օգտագործելը, այսպիսով, կարեւոր նշանակություն կարող է ունենալ լրագրողի աշխատանքի արդյունավետության համար, եթե լրագրողը երաշխավորի աղբյուրի գաղտնիությունը: Այս միտքն արտահայտվել է Գուդվինի գործով Եվրոպական դատարանի կայացրած որոշման մեջ. «Նման պաշտպանության բացակայության պարագայում տեղեկատվության աղբյուրները կդադարեն մամուլին աջակցելուց, ինչն էլ բացասաբար կանդրադառնա...ստույգ եւ վստահելի տեղեկատվություն տրամադրելու մամուլի հնարավորության վրա: Արդյունքում, կխաթարվի մամուլի, որպես հասարակության շահերի պաշտպանի կենսականորեն կարեւոր դերը»: Մակայն լրագրողական աղբյուրների պաշտպանության սկզբունքի ամենակարեւոր հիմնավորումն այն բացասական տպավորությունն է, որ կարող է առաջանալ հանրության, եւ մասնավորապես տեղեկատվության աղբյուրների մոտ. «...մամուլը եւ լրագրողները կարող են հեշտությամբ ներգրավվել ռստիկանության կամ դատական համակարգի գործունեության մեջ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով կայացրած որոշմամբ սահմանել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը ներառում է նաեւ լրագրողների իրավունքը տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու վերաբերյալ. «Տեղեկատվության լրագրողական աղբյուրների պաշտպանությունը մամուլի ազատության հիմնարար պայմաններից է...»: Դատարանը շարունակում է այս միտքը՝ նշելով. «Նման պաշտպանության բացակայության պարագայում տեղեկատվության աղբյուրները կդադարեն մամուլին աջակցելուց, ինչն էլ բացասաբար կանդրադառնա հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ ստույգ եւ վստահելի տեղեկատվություն տրամադրելու մամուլի հնարավորության վրա: Արդյունքում, կխաթարվի մամուլի՝ որպես հասարակական շահերի պաշտպանի կենսականորեն կարեւոր դերը: Նկատի ունենալով ժողովրդավարական հասարակությունում տեղեկատվության աղբյուրների պաշտպանության կարեւորությունը մամուլի ազատության համար եւ այն վտանգավոր ներգործությունը, որով աղբյուրի բացահայտման մասին դատական կարգադրությունը կարող է ունենալ մամուլի ազատության վրա, նման միջոցը չի կարող համարվել համատեղելի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ, եթե դա արդարացված չէ ավելի կարեւոր հասարակական շահի առկայության անհրաժեշտությամբ»:

Տեղեկատվության աղբյուրների գաղտնիությունը պաշտպանելու՝ լրագրողի իրավունքը երաշխավորելու նպատակով Եվրոպայի խորհրդի նախարարների խորհուրդը 2004թ. մարտի 8-ին հաստուկ հանձնարարական է ընդունել՝ N 2000(7), որը հիմնված է եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթների վրա: Հանձնարարականում ձեւակերպվում է «տեղեկատվության աղբյուրը բացահայտող տեղեկություն» հասկացությունը: Այս հասկացության մեջ մտնում են տեղեկության հետեւյալ տեսակները.

ա. տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձի անունը, հասցեն, հեռախոսի/ֆաքսի համարը, գործատուի անունը եւ այլ անձնական տվյալներ, ինչպես նաեւ անձի ձայնը եւ պատկերը,

բ. տեղեկության ստացման փաստացի հանգամանքներ, օրինակ, աղբյուրի հետ հանդիպման տեղի եւ ժամանակի, հաղորդակցության ձեւերի կամ լրագրողի եւ աղբյուրի միջեւ կայացրած համաձայնության մանրամասների մասին տեղեկություն,

գ. տեղեկություն չհրատարակված նյութի բովանդակության մասին, օրինակ, փաստեր, տվյալներ, ձայնային ազդանշաններ կամ պատկերներ, որոնք կարող են բացահայտել աղբյուրի ինքնությունը եւ որոնք դեռ չեն հրապարակվել լրագրողի կողմից,

դ. լրագրողի կամ նրա գործատուի մասնագիտական պարտականությունների վերաբերյալ տվյալներ, օրինակ, լրագրողի աշխատանքից բխող անձնական տվյալներ, որոնք կարելի է գտնել, օրինակ, հասցեների, հեռախոսազանգերի ցուցակում, համակարգչային հաղորդակցության գրանցումներում, բանկային եւ ճանապարհորդելու վերաբերյալ տվյալներում:

Ընդ որում, Հանձնարարականը նշում է, որ այս ցանկը սպառիչ չէ:

Կարելու է այն հանգամանքը, որ Հանձնարարականը վերաբերում է ոչ միայն աղբյուրի հայտնած փաստերին, այլ նաեւ կարծիքներին կամ գաղափարներին: Ինչպես նաեւ, այս աղբյուրի գաղտնիությունը պահպանելու իրավունքը ոչ միայն լրագրողին է, այլեւ խմբագրին: Սա հաստատվել է եվրոպական դատարանի Դե Հաեսը եւ Գիյսելը ընդդեմ Բելգիայի 1997 թ. փետրվարի 27-ի որոշմամբ: Խիստ կարևոր է նաեւ լրագրող տերմինի ընդգրկումն մեկնաբանությունը: Ըստ հանձնարարականի, լրագրող է համարվում «Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը պարբերաբար կամ իր մասնագիտական պարտականությունների կատարման բերումով զբաղվում է տեղեկատվություն հավաքելով եւ դրանք զանգվածային լրատվության ցանկացած միջոցով հասարակությանը տարածելով»: Այսպիսով, լրագրող հասկացության մեջ են մտնում նաեւ ազատ լրագրողները, որոնք չեն համարվում որեւէ կոնկրետ ՁԼՄ ներկայացուցիչ եւ աշխատանքային պայմանագրային հարաբերությունների մեջ չեն գտնվում որեւէ գործատուի հետ:

ՀՀ օրենսդրությամբ այս իրավունքը երաշխավորվում է «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով.

«1. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաեւ լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, եւ սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ»:

Հոդվածի առաջին մասի ձեւակերպումից հստակ է, որ այս իրավունքն ունեն ինչպես լրատվական գործունեություն իրականացնողը, այնպես էլ լրագրողը, ինչպես դա սահմանված է Հանձնարարականում:

ՀՀ օրենսդրությունը ներառում է եւս մի կարևոր երաշխիք. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը պաշտպանության տակ է առնում տեղեկատվության արտահոսք թույլ տված պաշտոնյաներին: Այս պաշտոնյաների իրավական պաշտպանությունը նշանակում է, որ նրանք պաշտպանված են, նույնիսկ եթե տեղեկատվության տարածմամբ խախտել են իրենց պայմանագրային կամ օրենքով սահմանված պարտականությունները, եթե դա արել են՝ համոզված լինելով, որ պաշտպանում են հանրային շահերը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը բացառում է ապօրինի գործողությունների մասին ահազանգած (արտահոսք թույլ տված) պաշտոնյաների վարչական կամ քրեական պատասխանատվությունը, եթե այդ տեղեկատվության հրապարակմամբ կարող են կանխվել հասարակությանը սպառնացող վտանգը, մարդկանց անվտանգությանն ու առողջությանը, շրջակա միջավայրին սպառնացող աղետները, մի խոսքով՝ գաղտնիքի հրապարկումն օգուտ է բերում հասարակությանը (ՏԱ մասին օրենքի 14 հոդվածի 2-րդ մաս):

Հայաստանում աղբյուրը բացահայտելու պահանջ լրագրողական պրակտիկայում հաճախ է հանդիպում, սակայն դատական նախադեպ դեռևս տեղի է ունեցել մեկ անգամ՝ 2002 թվականին: Դատարանում որպես պատասխանող հանդես էր գալիս «Տարեգիր» էլեկտրոնային պարբերականը: Հայցվորը՝ Անդրանիկ Պողոսյանը՝ «Առագաստ» սրճարանում սպանված Պողոս Պողոսյանի եղբայրը, պահանջում էր հերքել 9 ամիս առաջ (22.01.2002թ.) տպագրված «Արյան գինը» հոդվածում առկա տեղեկությունները (հեղինակ Լիլիթ Սեյրանյան): Հոդվածում լրագրողը գրել էր. «ՀՅԴ ԳՄ անդամ մեր զրուցակիցը, որը չցանկացավ բացահայտված մնալ, տեղեկացրեց, որ գործով ամբաստանյալ Կուկուն, նույն ինքը՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի թիկնապահ Ադամալ Հարությունյանը, 90 հազար դոլար է փոխանցել Անդրանիկ Պողոսյանին՝ դատավարության ընթացքում ներկայացվող սցենարին չընդդիմադրելու համար»: Դատավարության ընթացքում հայցվորը հայտարարել էր, որ հոդվածն ամբողջությամբ զրպարտություն է՝ նշելով, որ իրեն ոչ այնքան տեղեկությունների անճշտությունն է հետաքրքրում, որքան այն, թե ով է լրագրողի տեղեկատվության աղբյուրը: Լիլիթ Սեյրանյանը հրաժարվել է բացահայտել աղբյուրը՝ դրա համար, իր իսկ ասելով, ունենալով հիմնավոր պատճառներ: Դատարանի որոշմամբ թերթին պարտադրվեց հերքել հրապարակված տեղեկությունները, եւ ոչ թե բացահայտել լրատվության աղբյուրը: Այսպիսով, դատարանը պաշտպանեց լրագրողի՝ աղբյուրի ինքնության գաղտնիությունը պահպանելու իրավունքը:

Այս իրավունքը մեծ կարեւորություն ունի հատկապես հետաքննող լրագրողների համար: Եթե նրանք հղում կատարեն միայն պաշտոնական տվյալներին կամ հենվեն միայն սովորական ճանապարհներով ստացված տեղեկությունների վրա, ապա երբեք չեն կարողանա կատարել իրենց գործը: 2004 թվականին ՀՀ ՆԳ աշխատակիցների կողմից աղբյուրը բացահայտելու պահանջ էր ներկայացվել Հետաքննող լրագրողներ կազմակերպության նախագահ Էդիկ Բաղդասարյանին: Է. Բաղդասարյանը «Առավոտ» օրաթերթում նյութ էր հրապարակել քաղաքական գործիչ Աշոտ Մանուչարյանի նկատմամբ իրականացված բռնարարքի մասին՝ հրապարակելով այն սափրագլուխի լուսանկարը, որին Ս. Մանուչարյանը ճանաչել էր որպես հանցագործ: Մինչդեռ նախաքննության մարմինը մինչ այդ հայտարարել էր, թե հանցագործի անձը հայտնի չէ: Հոդվածի եւ լուսանկարի հրապարակումից հետո լրագրողը հրավիրվել էր քննչական բաժանմունք՝ ցուցմունք տալու, որից նա հրաժարվել էր: Ավագ քննիչ Արսեն Այվազյանը 2004թ. սեպտեմբերի 15-ից լրագրողին գործով ներգրավում է որպես վկա Աշոտ Մանուչարյանի նկատմամբ իրականացված բռնարարքի առթիվ հարուցված քր. գործում: Է. Բաղդասարյանը բողոքարկել է քննիչի որոշումը՝ իրեն որպես վկա ներգրավելու վերաբերյալ. «Միաժամանակ հայտնում եմ, որ հրաժարվում եմ ինֆորմացիայի աղբյուրները բացահայտել: Այդ մասին ես տեղեկացրել եմ նաեւ քննիչին՝ ասելով, որ ես որեւէ աղբյուր չեմ նշի՝ նախ եւ առաջ այդ մարդկանց անվտանգությունը հաշվի առնելով: Նշեմ, որ քննիչի բոլոր հարցերը վերաբերում են հենց տեղեկատվության աղբյուրների բացահայտմանը», - պատմում է Է. Բաղդասարյանը: Սակայն «Քրեական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքի 86 հոդվածով չի նախատեսվում, թե որպես վկա չեն կարող կանչվել եւ հարցաքննվել լրագրողները: Ընդհանրապես՝ ցուցմունքներ տալուց հրաժարվել կարելի է միայն այն պարագայում, երբ խոսքն ամուսնու կամ մերձավոր ազգականների մասին է: Մնացած բոլոր դեպքերում ցուցմունք տալը վկայի պարտականությունն է, որը չկատարելու դեպքում ենթակա է պատասխանատվության: Սա հետաքրքիր դեպք է նրանով, որ ՆԳ աշխատակիցները՝ չկարողանալով ստիպել լրագրողին բացահայտել աղբյուրը՝ նրան գործով ներգրավում են որպես վկա՝ շատ լավ իմանալով, որ վկայի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելն առաջ է բերում քրեական պատասխանատվություն: Իսկ լրագրողները նման դեպքերից ապահովագրված չեն: Փաստորեն, եթե լրագրողին հայտնի են դառնում քրեական գործով մանրամասներ, նրան կարող են ճանաչել որպես վկա եւ ներգրավել գործում, ինչը բխում է վկա հասկացության օրենսդրական ձեւակերպումից: «Վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մամնի կողմից կանչված

այն անձն է, ում կարող են հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որեւէ հանգամանք» (ՀՀ Քր. դատ. օրենսգիրք, հոդված 86): Տեղեկություններ տրամադրող աղբյուրին վերաբերող տվյալները քր. գործով պարզելու ենթակա հանգամանք են, ինչը չբացահայտող լրագրողը կենթարկվի պատասխանատվության՝ համաձայն ՀՀ Քրեական օրենսգրքի 339 հոդվածի՝ ցուցմունք տալուց հրաժարվող վկան «պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 50-100-ապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով»: Թերեւս նման հանգամանքներում լրագրողը կարող է դիմել «Զանգավածային լրատվության մասին» օրենքի 5-րդ հոդվածի պաշտպանությանը, համաձայն որի տեղեկատվության աղբյուրի բացահայտում լրագրողին կարող է պարտադրվել միայն դատարանի որոշմամբ (եւ ոչ նախաքննության կամ հետաքննության մարմինների կողմից), այն էլ միայն քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով: Այս դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ:

Ներկայացնենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քննած շրջադարձային գործը՝ «Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության», որով դատական որոշումը կայացվել է 27.03.1996թ.: Գուդվինի գործով որոշման հրապարակումից անմիջապես հետո ընդունվեց Նախարարների Խորհրդի N. 2000(7) Հանձնարարականը:

1990 թվականին լրագրող Ուիլյամ Գուդվինը, որն աշխատում էր Լոնդոնի «Էնջինիեր» ամսագրում որպես լրագրող-ստաժոր, մեղավոր ճանաչվեց Լորդերի պալատի կողմից դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար: Դատավճռի համար հիմք էր հանդիսացել այն հանգամանքը, որ Գուդվինը հրաժարվել էր բացահայտել այն անձի ինքնությունը, որը նրան ֆինանսական տեղեկատվություն էր տվել «Տետրա» մասնավոր ձեռնարկության գաղտնի կորպորատիվ ծրագրերի մասին: Բացահայտման պահանջը համարվեց օրինական. բացահայտումն անհրաժեշտ էր արդարադատության շահերից ելնելով:

1989 թվականի նոյեմբերի 2-ին լրագրողին զանգահարում է մի մարդ՝ եւ տեղեկություն հայտնում այն մասին, որ «Տետրա» մասնավոր ընկերությունն այդ պահին զբաղված է 5 միլիոն ֆունտ ստերլինգ վարկ վերցնելով, քանի որ ունի ֆինանսական պրոբլեմներ: Լրագրողը զանգահարում է «Տետրա»՝ ստուգելու իրեն տրամադրված տեղեկությունները եւ պարզելու, թե ինչ պրոբլեմներ ունի ընկերությունը: Լրագրողին հայտնի դարձած տեղեկատվությունն առկա էր միայն ընկերության առաջիկա ծրագրերի փաթեթում, որից գոյություն ուներ ընդամենը 8 օրինակ, որոնք պահվում էին հույժ գաղտնի պայմաններում: 1989 թվականի նոյեմբերի 1-ին կորել էր 8 օրինակներից մեկը: «Տետրան» դիմեց դատարան՝ պահանջելով արգելել որեւէ ՋԼՄ-ի, այդ թվում «Էնջինիերին» տպագրելու հայտնի դարձած տեղեկությունները: Նոյեմբերի 22-ին ընկերությանը նաեւ հաջողվեց դատարանին համոզել ընդունելու եւս մեկ որոշում՝ պարտադրել լրագրող Գուդվինին բացահայտել, թե ով է իրեն տրամադրել այդ տեղեկությունները, հիմնավորելով, որ բացահայտումով կկարողանան գտնել փաթեթի կորած օրինակը: Անգլիայի Բարձր դատարանը 1990 թվականի ապրիլի 10-ին Գուդվինին տուգանեց 5000 ֆունտ ստերլինգ՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար: Անգլիայի դատարանները գտնում էին, որ սրանով հետապնդվում էր իրավաչափ նպատակ. պարզել գաղտնի փաստաթղթի անհետացման համար մեղավոր անձի ինքնությունը, որպեսզի վերադարձվի այդ փաստաթուղթը եւ նրա նկատմամբ դատական հետապնդում հարուցվի (փաստաթղթերը լրագրողին էր հանձնել ընկերության աշխատակիցներից մեկը): Գուդվինը դիմեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պարզելու՝ արդյո՞ք Անգլիայի դատարանի պահանջը տեղեկատվության աղբյուրը բացահայտելու մասին արդարացի էր՝ ըստ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջների:

Ակնհայտ է, որ Անգլիայի դատարանների պահանջը տեղեկատվական աղբյուրը բացահայտելու մասին հետապնդում էր 10 (2) հոդվածում նշված իրավաչափ նպատակներից մեկը. «այլ անձանց իրավունքները պաշտպանելը», տվյալ դեպքում՝ «Տետրա»-ի ֆինանսական շահը:

Սակայն, Դատարանը նաեւ պետք է պարզեր, թե արդյո՞ք ազգային դատարանի պահանջը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությանը»: Սա որոշվում է երեք չափորոշիչով. արդյո՞ք նման

միջամտությունը պայմանավորված էր սուր հասարակական պահանջով, արդյո՞ք միջամտությունը համաչափ էր նշված իրավական նպատակին հասնելու համար, եւ արդյո՞ք միջամտության ընտրված ձեւը բավարար միջոց էր: Դատարանի խնդիրն էր նաեւ պարզել, թե տվյալ հանգամանքներում ո՞ր շահն էր գերակշռում. լրատվության աղբյուրների գաղտնիության պաշտպանության հասարակակա՞ն շահը, թե՞ «Տետրա» ընկերության իրավունքները՝ գաղտնի պահելու իր ֆինանսական դրությանն առնչվող տեղեկությունները:

Դատարանը հանգեց այն կարեւոր համոզման, որ տեղեկատվության աղբյուրների բացահայտումը կախված չէ տվյալ տեղեկատվությունը ստանալու հասարակական հետաքրքրության աստիճանից: Նույնիսկ եթե տվյալ տեղեկատվությունը ստանալու հասարակական հետաքրքրությունը փոքր է, աղբյուրի բացահայտումը չի կարող արդարացված լինել, որովհետեւ դա խիստ «...բացասաբար կանոնադառնա հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ ստույգ եւ վստահելի տեղեկատվություն տրամադրելու՝ մամուլի հնարավորության վրա: Արդյունքում, կխաթարվի մամուլի՝ որպէս հասարակության շահերի պաշտպանի, կենսականորեն կարեւոր դերը» (կետ 39): Դատարանը որոշեց, որ տեղեկատվական աղբյուրների բացահայտումը կարող է լքջորեն վնաս հասցնել լրագրողների եւ նրանց աղբյուրների միջեւ փոխհարաբերություններին, եւ ապագայում լրագրողներին տեղեկատվություն տրամադրելու՝ աղբյուրների պատրաստակամությանը:

Դատարանը գտավ նաեւ, որ աղբյուրի գաղտնիությունը բացահայտելու պահանջը համաչափ չէ հետապնդվող իրավական նպատակին հասնելու համար: «Տետրա» ընկերությունն արդեն ստացել էր հողվածների հրապարակումը կասեցնող դատական արգելք, որով իրականացրել էր ֆինանսական գաղտնիությունը պահպանելու իր իրավունքը: Աղբյուրի բացահայտման լրացուցիչ իրավունք ստանալով խախտվում է հասարակական շահի եւ «Տետրա»-ի իրավունքների միջեւ հավասարակշռությունը. մամուլի ազատության լրացուցիչ սահմանափակումը, որն առաջացնում էր տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը բացահայտելու պահանջը, ըստ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի նպատակների, չունէր բավարար հիմք: Այսպիսով, Դատարանը գտավ, որ «չկա ողջամիտ համաչափություն տեղեկատվության աղբյուրի բացահայտման պահանջով հետապնդվող իրավաչափ նպատակի եւ դրան հասնելու համար օգտագործված միջոցների միջեւ: Տվյալ դեպքում պետությունն օգտագործել էր երկու միջոց. լրագրողից պահանջելով բացահայտել գաղտնի տեղեկությունը հայտնող անձի ինքնությունը եւ տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու համար լրագրողի վրա դրված տուգանքը: Երկու միջոցներն էլ Դատարանի կողմից համարվեցին ոչ համաչափ, ուստի տեղի էր ունեցել Կոնվենցիայի 10-հոդվածի խախտում: Եվրոպական դատարանն այն կարծիքը հայտնեց, որ բացահայտելու պահանջը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 10 հոդվածի հետ, քանի դեռ դա պայմանավորված չէ գերակշռող հասարակական շահով:

### ***Իրավունքը բացարձակ չէ. սահմանափակումներ***

Լրագրողի՝ աղբյուրի ինքնությունը չբացահայտելու իրավունքը բացարձակ չէ եւ ենթակա է սահմանափակման: Այս իրավունքի սահմանափակման հիմքերը տրված են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ մասում, որը նշում է «պարտավորությունների» եւ «պարտականությունների» մասին, որոնք կարող են լրագրողի իրավունքը սահմանափակել աղբյուրների գաղտնիությունը պահպանելու առումով: Եթե նման պարտավորությունները եւ պարտականությունները բխվում են 10-րդ հոդվածի երկրորդ մասում տրված շահերին, ապա այստեղ վճռորոշ դեր է խաղում այն շահը, որը գերակշռում է ազատ խոսքի իրավունքին: Եվրոպական դատարանը որոշել է, որ լրագրողական աղբյուրը բացահայտելու դատարանի պահանջը «...արդարացված է, եթե դա է պահանջում կենսական նշանակություն ունեցող հասարակական շահը»:

Համաձայն ԶԼ մասին օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լրագրողին կամ լրատվական գործունեություն իրականացնողին աղբյուրը բացահայտելու պահանջ կարող է ներկայացվել հետեւյալ հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում, այս հանգամանքները պետք է առկա լինեն միաժամանակ.

1. տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ,
2. պահանջը կարող է ներկայացվել քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով,
3. սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները,
4. հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ պետք է լինի, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը:

Առաջին պայմանը նշում է, որ դատարանից բացի որեւէ պետական կամ այլ մարմին չի կարող աղբյուրը բացահայտելու պահանջ ներկայացնել (օր. ոստիկան, քննիչ, դատախազ եւ այլն): Միայն դատարանի որոշմամբ կարող է պարտադրվել բացահայտում:

Տվյալ պահանջը դատարանը կարող է ներկայացնել միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն բացահայտելու նպատակով: Համաձայն ՀՀ Քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի՝ ծանր հանցագործություն է համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար Քր. օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը: Առանձնապես ծանր հանցագործություններ են դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար նախատեսվում է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում: Երրորդ եւ չորրորդ պայմաններից բխում է, որ դատավորը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է նժարի վրա դնի մի կողմից՝ հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը: Եթե առաջինն ավելի ծանրակշիռ է, ապա դատավորը կարող է բացահայտում պահանջող որոշում կայացնել: Կարելու է երաշխիք է այն, որ աղբյուրի բացահայտման ժամանակ, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դնփակ:

Վերոնշյալ պայմանները բխում են Հանձնարարականի պահանջներից, որտեղ նշվում է, որ տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է համարվել անհրաժեշտ, երբ համոզիչ կերպով հաստատված է.

ա. տեղեկատվության աղբյուրի բացահայտում պահանջող անձանց կամ պետական մարմինների մոտ սպառվել են այլընտրանքային միջոցները

բ. աղբյուրի բացահայտման իրավաչափ նպատակը գերակշռում է հասարակական շահին: Լրատվության աղբյուրի բացահայտումը կարող է համարվել արդարացված, եթե դատավարության երկու կողմերը սպառել են բոլոր այլ միջոցները: Այդպիսի միջոցներ են, օրինակ, գաղտնի տեղեկության տարածման կապակցությամբ ընկերության ներսում ներքին քննության վարումը, գաղտնի տեղեկություն ստանալու սահմանափակումների ուժեղացումը, կամ որպես հակազդող քայլ հակառակ տեղեկության տարածումը եւ այլն: Մինչ լրագրողին աղբյուրը բացահայտելու պահանջ ներկայացնելը, դատավարության կողմերը պետք է սպառեն նաեւ այլ, ոչ լրագրողական աղբյուրները: Այդպիսի աղբյուրներ կարող են համարվել, օրինակ, աշխատակիցները, գործընկերները, պայմանագրային կարգով աշխատողները եւ այլն: Այն անձինք կամ պետական իշխանությունները, որոնք պահանջում են բացահայտել տեղեկատվության աղբյուրը, պետք է նախ եւ առաջ որոնեն եւ կիրառեն համաչափ այլընտրանքային միջոցներ, որոնք պատշաճ կերպով կարող են պաշտպանել իրենց իրավունքները եւ շահերը: Այլընտրանքային միջոցների առկայության դեպքում տեղեկատվության աղբյուրը բացահայտելու անհրաժեշտությունը վերանում է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ խոսքի ազատության սահմանափակման անհրաժեշտությունը պետք է հստակ սահմանված լինի: Այս իմաստով (բ) ենթակետը

պահանջում է հստակորեն ցույց տալ, որ աղբյուրը բացահայտելու պահանջը պայմանավորված է իրավաչափ նպատակի առկայությամբ, որը գերակշռում է աղբյուրը բացահայտելու հասարակական շահը: «Հստակ կերպով ցույց տալ» այս պարագայում նշանակում է ուսումնասիրել տվյալ գործի բոլոր փաստերը, ինչպես նաև օգտագործել հայեցողության իրավունքն այնպես, որպեսզի հետագայում հնարավոր լինի դա ստուգել: Առաջարկվում է, որպեսզի համապատասխան իշխանությունները նշեն բոլոր այն պատճառները, ըստ որոնց հասարակական շահը գերակշռում է աղբյուրը չբացահայտելու իրավունքին:

Դատարանը բազմիցս նշել է, որ լրատվության միջոցների պարտականությունն է տեղեկատվության եւ գաղափարների տարածումը, իսկ հասարակության իրավունքն է դրանք ստանալը: Լրագրողի կողմից աղբյուրը բացահայտելու երեւոյթի վտանգավոր ներգործությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ լրատվության միջոցների համար: Այդ պատճառով ազգային դատարանները եւ իշխանություններն առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու լրագրողական իրավունքի կարեւորության վրա: Լրագրողի կողմից տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է կատարվել միայն ելնելով բացառիկ հանգամանքներից, որոնք սպառնում են կենսականորեն կարեւոր հասարակական եւ անձնական շահերին, որոնց առկայությունը կարելի է հստակորեն ցույց տալ: Միայն այն դեպքերում, երբ հասարակական շահը գերակշռում է եւ հանգամանքները խիստ եւ կենսական կարեւորություն են ներկայացնում, աղբյուրի բացահայտումը կարող է համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակության համար՝ ըստ Եվրոպական Կոնվենցիայի 10(2) հոդվածի:

Այնուամենայնիվ, մարդու իրավունքների եւ մամուլի հարցերով փորձագետների աշխատախումբը եկել է այն եզրակացության, որ 10-րդ հոդվածի 2-րդ մասում նշված իրավաչափ նպատակներից մի քանիսը կարող են հիմք լինել տեղեկատվության աղբյուրի բացահայտման անհրաժեշտության համար: Այսպիսով, աղբյուրի գաղտնիության հասարակական շահը չի կարող գերակշռել, եթե բացահայտումն անհրաժեշտ է.

- մարդու կյանքի պաշտպանության համար,
- ծանր հանցագործության կանխման համար,
- ծանր հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանության համար:

Մարդու կյանքի իրավունքն ամենակարեւոր իրավունքն է: Մյուս բոլոր իրավունքները ստորադաս են կյանքի իրավունքին: Այս իրավունքի պաշտպանությունն արդարացնում է տեղեկատվության աղբյուրի բացահայտումը:

Ծանր հանցագործությունների թվում են սպանությունը, անչափահասի բռնաբարությունը, ահաբեկչությունը, բանդիտիզմը, ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները եւ այլն: Նման հանցագործությունների կանխման նպատակով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է արդարացված լինել:

Եւ վերջապես՝ ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքը կարող է արդարացված հիմք համարվել լրագրողական աղբյուրի բացահայտման համար: Մա բխում է Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածից, որը սահմանում է մեղադրյալի արդար դատավարության իրավունքը:

Վերջին հաշվով լրագրողն ինքն է որոշում՝ բացահայտել տեղեկատվության աղբյուրը, թե՛ ոչ, նույնիսկ եթե խոսքը գնում է դատարանի պահանջը կատարելու մասին: Մեր կարծիքով, լավագույն ելքը կարող է լինել աղբյուրի կամ աղբյուրների հետ համաձայնության գալը, որ գաղտնիության խոստումը պահպանվի մինչեւ դատական փուլ հասնելը: Նման համաձայնության դեպքում լրագրողն ավելի պաշտպանված կլինի: Աղբյուրի ինքնության գաղտնիությունը պաշտպանելը լրագրողի համար եւ՝ իրավական, եւ՝ էթիկական պարտականություն է՝ կատարել տրված խոստումը, որից եւ կախված է լրագրողի նկատմամբ վստահությունը եւ՝ աղբյուրների հետ փոխհարաբերություններում, եւ՝ հասարակության մեջ ընդհանրապես:

## Օգտագործված աղբյուրներ

www.rsf.org

www.washingtonpost.com

Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1996, կետ 39: Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.) /Վ. Հովհաննիսյան, Լ. Հակոբյան, Երեւան, Տիգրան Մեծ, 2002:/:

Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1996, կետ 40: www.echr.coe.int

Տես. Ֆրեստոզը եւ Ռուարն ընդդեմ Ֆրանսիայի, 21 հունվար 1999, կետ 51:

Տես. Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության դատավճիռը, կետ 37:

## Էլիտան ո՞րն է, մեր տղերքն են, էլի...

### Վլադիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գրող հրապարակախոս

Գյումրի

1990-ի խորհրդարանական ընտրություններից հետո, երբ Հայաստանի նոր Գերագույն Խորհուրդը Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ սկսեց գումարել իր նիստերը, սկզբից Կառավարության նիստերի դահլիճում, ապա, եթե հիշում եք, դեռ բավականին երկար ժամանակ Մելիք-Ադամյան փողոցի վրա մշտապես կարելի էր տեսնել մոտ հարյուրի հասնող մարդկանց մի խումբ: Ընդ որում, ամեն օր՝ նույն մարդկանց խումբը: Իրենց պահանջների մեջ նրանք ավելի քան անկեղծ էին ու որոշակի: Նրանց միակ ձգտումն ու ցանկությունն այն էր, որ իրենց նույնպես թույլ տան մասնակցել երկրի խորհրդարանի նիստերին եւ, բնականաբար, հնարավորություն տան այնտեղի ամբիոնից հնչեցնել իրենց կարծիքները:

Մարդիկ խիստ զարմացած էին ու շփոթված, որ երեկվա իրենց այդքան պաշտելի ընտրյալներն այսօր իրենց չեն հիշում, չեն ցանկանում ճանաչել եւ ժողովրդից թաքնվել են միլիցիայի եւ շենքի պատերի ետեւում: Ավելի պարզ ասած՝ «ղավաճանել են»: Մեկը նույնիսկ ճոռոմաբանեց, թե «շարժումն այսօր հրապարակներից եւ փողոցներից տեղափոխվել է պալատներ, որտեղ հասարակ ժողովրդի համար, իհարկե, տեղ չկա»: Եվ հավելեց. «Թող, թող գնան: Թող գնան այդ փափուկ աթոռներին նստեն: Հետո կհասկանան, որ առանց մեզ ոչինչ էլ չեն կարող անել»: Այսինքն, այդ մարդիկ անկեղծորեն ասում էին, որ իրենք նույնպես անմիջականորեն, ամենաուղղակի ձեւով իրենց մասնակցությունը (իրենց համոզմամբ՝ խիստ անհրաժեշտ ու կարելուք մասնակցությունը) պետք է ունենան պետության ղեկավարման հարցում:

Որքան հիշում եմ, դրանցից մեկին՝ Եղիշ քեռուն, համենայնդեպս, ահագին նիստերի մասնակից դարձրին, եւ, եթե Լեւոն Տեր-Պետրոսյանի տրամադրությունը տեղն էր լինում, նրան նույնիսկ մեկ-մեկ ելույթի իրավունք էլ էր տալիս՝ «սա էլ ժողովրդի ձայնը»:

Ի վերջո, այդ անիմաստ ու ավելորդ լարվածություն ստեղծող հավաքներին վերջ տալու, այն է՝ երեկվա ցուցարարներից ոմանց մոտ դեռեւս դրսևորվող «մնացորդային միտինգայնության» բարդույթը ցրելու նպատակով, երկրի Գերագույն Խորհրդի նորընտիր նախագահը մի օր դիմեց ժողովրդին մի շարք բացատրություններով ու պարզաբանումներով: Դրանց շարքում նա, մասնավորապես, շեշտեց, թե «...պետք է հասկանանք բոլորս, որ արտաքին քաղաքականությունն, օրինակ, ազգովի չի կերտվում: Դա զուտ եւ խիստ պրոֆեսիոնալ գործ է»:

Շատ բարձր գնահատելով, իսկ պահերով՝ նաև հիանալով Հայաստանի առաջին նախագահի հայերենով, համարձակվենք, համենայնդեպս, այս մի դիպվածով, այն է, «... որ արտաքին քաղաքականությունն ազգովի չի կերտվում...», չհամաձայնվել դոկտոր Տեր-Պետրոսյանի հետ: Բնական է, ոչ թե հնչեցրած նախադասության լեզվա-քերականական կառուցվածքի (այն, ինչպես միշտ, անթերի է), այլ գուտ նրանով արտահայտած մտքի առումով:

Ինչ խոսք, բանակցություններն, իրոք որ, ազգովի չեն վարում, ազգովի չեն գնում նաև ինչ-ինչ թղթեր ստորագրելու: Այդ ամենն, իրոք որ, «գուտ եւ խիստ պրոֆեսիոնալ գործ է»: Բայց բանակցությունների առարկան, սկզբունքները, ստորագվելիք թղթում ամրագրվելիք պայմանները, մեր կարծիքով, անհրաժեշտորեն եւ պարտադիր կերպով պետք է կերտվեն հենց ազգովի: Այսինքն, «խիստ պրոֆեսիոնալները» վարում են իրենց բանակցությունները եւ ստորագրում ինչ-ինչ պայմանագրեր ու համաձայնագրեր, հիմք ընդունելով սեփական ժողովրդի, սեփական հանրության շրջանում տվյալ հիմնահարցի վերաբերյալ ձեռնարկված ու հիմնավորված կարծիքներն ու մոտեցումները: Հասկանալի է, որ այդ կարծիքի ձեռնարկման համար ամենեւին էլ չի ենթադրվում, որ ամեն մի հայ իր տանը պետք է ստեղծի ռազմավարական հետազոտությունների սեփական վերլուծական կենտրոն եւ այնտեղից համապատասխան «խողովակներով» իր առաջարկներն ու խորհրդատվություններն առաքի երկրի արտգործնախարարություն:

Պարզապես, հակառակ պարագայում, երբ բացակայում է օրգանական կապը սեփական ազգի հետ, իրենք իրենց տրամադրված այդ «խիստ պրոֆեսիոնալները» վեր են ածվում ընդամենը չդասավանդող վարժապետների, չբուժող բժիշկների ու չգրող պոետների, ինչի արդյունքում էլ ազգը ստանում է, օրինակ, մի փաստաթուղթ, որը կոչվում է «Բաթումի պայմանագիր», ըստ որի, ինչպես օտարերկրյա մի դիվանագետ էր այդ օրերին խիստ «դիվանագիտորեն» նկատել, «...թուրքերի կողմից հայերին հնարավորություն էր տրվում մտնել Սեւանա լիճը լողանալու, սակայն հնարավորություն չէր տրվում լճից դուրս գալու եւ չորանալու»:

Ընդ որում, այսօր մեզանում շատերի մոտ կա ազնիվ ու չափազանց պրիմիտիվ այն մոլորությունը, թե ներքին եւ արտաքին քաղաքականությունները տարբեր բաներ են, եւ պետք չէ պայմանավորել մեկը մյուսով: Այսինքն, եթե ներքին քաղաքականության մեջ առկա էլ լինեն որոշ խոտաններ, միեւնույն է՝ արտաքին քաղաքականությունը հնարավոր է վարել ի նպաստ եւ հոգուտ սեփական պետության եւ ազգի:

Այդպիսի բան չկա եւ չի էլ կարող լինել: Խնդրում ենք, իհարկե, ներողամիտ լինել, որ ստիպված այբբենական ճշմարտություններ ենք արտաբերում: Ցանկացած նորմալ պետություն ունի մշակված ու ձեռնարկված միասնական պետական քաղաքականություն՝ իր մի շարք բաղադրիչներով: Ոչ շատ մեծ վերապահումներով, երեւի թե, քաղաքականությունը նույնիսկ կարելի է համարել այն ընդհանուրի մի մասը, ինչի տակ որ ամենալայն առումով հասկացվում է մշակույթ ասածը: Եվ ինչպես որ, ասենք, ազգի գրականությունը, երաժշտությունը, պարարվեստը, այնպես էլ նրա քաղաքականությունը կերտվում, զարգանում ու ձեռնարկվում է տվյալ ազգի միջոցով ու շնորհիվ, բայց, արվեստի նման, նա էլ, գործածության մեջ է դրվում, մատուցվում է եւ իրականացվում, կյանքի է կոչվում արդեն այդ ազգի այն հատուկ խավի միջոցով ու ջանքերով, որին անվանում են ազգային էլիտա:

Ազգային էլիտային վերաբերող հարցի գուտ գիտական կողմը թողնելով «խիստ պրոֆեսիոնալների» դատին, մենք բերենք այդ խավի նշանակությանն ու դերակատարմանն առնչվող մեկ այլ կարծիք, որն արտահայտում է սովորական քաղաքացու տեսակետը խնդրո առարկա հարցի վերաբերյալ: Ուստի եւ՝ առավել հասկանալի ու ըմբռնելի է, ինչպես ասում են, լայն զանգվածների համար:

- Աղբբեջանում խախտված է այն գլխավոր մեխանիզմը, առանց որի ազգը գոյատևել չի կարող: Ցանկացած ազգ ապրում է իր էլիտայի գոյության շնորհիվ: Այժմ այն գոյություն չունի, եւ ամենազլխավորը՝ խախտված է նրա գոյացման, ստեղծման մեխանիզմը: Այն, ինչ մնացել է նրանից, շարտված է դեպի կյանքի ճամփեզր: Ցանկացած երկիր՝ առանց ազգային էլիտայի, չունի ապագա: Որովհետեւ այսօր գործող մեխանիզմը իշխանության վերելներն է հասցնում ոչ լավագույններին, աշխատում են ընտանեկան,

գումարային, տարածաշրջանային, կոռուպցիոն նկատառումները: Անձ, որն արժանի է, պրակտիկորեն չի կարող վերելք ունենալ, կամ էլ պետք է ձեռագնի, որ ինքն էլ բոլորի նման է, հակառակ դեպքում՝ կշարսվի դեպի կյանքի ճամփեզր:

Այս բառերը պատկանում են Ռուստամ Իբրահիմբեկովին՝ մի անձնավորության, որն, անկախ իր ազգային պատկանելությունից, ցանկացած մտածող մարդու համար ներկայանում է սեփական երկրի ու ազգի համար սիրտը ցավող մտավորականի խորն ու իմաստուն իր կերպարով:

Դե, Ադրբեջանի պարագայում ամեն ինչ պարզ է: Ոչ պետություն են ունեցել, ոչ էլ նույնիսկ միատարր ձեռավորված էթնոս: Անվանում նույնիսկ չեն ունեցել: Երեկ մեկ, էսօր երկուս՝ նոր-նոր ժողովուրդ են դարձել: Էլ ի՞նչ էլիտա պետք է ունենային:

Իսկ ինչպիսի՞ն է այդ առումով վիճակը մեր՝ հինգհազարամյա մշակույթ ունեցող ազգի մոտ: Մեր պատմության օբյեկտիվ ամբողջ ընթացքը, մեր ազգի ու նրա եղած ու չեղած էլիտայի գործունեության արդյունքը մեր աչքի առաջ է, եւ, ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են: Պարզապես այդ օբյեկտիվ իրականությունը շատ հաճախ բացահայտ ձեռով «չի խոսում» մեր երկաթագիր գրքերի հետ եւ ստիպում է կասկածի տակ վերցնել այս կամ այն պատմիչի կողմից գրավոր արձանագրած փաստի արժանահավատ լինելը: Իսկ նայելով դեպքերի ընթացքին եւ դրանց լուսաբանմանը ընդամենը վերջին մեկ դարի եւ հատկապես մեր օրերի կտրվածքով, գալիս ես այն համոզման, որ դրանք ընդամենն անձնական շահ ու եկամուտ հետապնդող գրվածքներ պետք է լինեն:

Կամ պատվերով գրված, ոնց որ մեր օրերին՝ Արցախյան պատերազմի լուսաբանումը, կամ էլ կամավոր-քծնական՝ ինչպիսին է, օրինակ, խիստ հեղինակազրկված, սակայն դեռեւս պաշտոնատեր մի գործչի կողմից «ափալ-թափալ» գրված Լեւոն Տեր-Պետրոսյանի կենսագրությունը: Կամ էլ, որն առավել հավանական է, երկուսը միասին: Իրոք, բացի քծնանքից ու այդ միջոցով անձնական շահ ակնկալելուց, ի՞նչը կարող է մարդուն դրդել գրել 50-ամյա մեկ այլ անձի կենսագրություն, որն ընդամենը հանդիսանում է մոտ հազար տարի պետականությունից գրված նորանկախ մի երկրի՝ ընդամենը հինգ տարվա ղեկավար: Եվ ինչպես համաձայնվեց իր անձը գովերգելու այդ էժանագին ձեռին ինքը՝ դոկտոր Տեր –Պետրոսյանը:

Դե, այդպես էլ պարել ենք, էլի: Ինքներս մեզ կեղծելով, ինքներս մեզ խաբելով: Օրինակ, հաստատ ապացուցման կարիք չկա, որ փաստացի մի քանի դար մենք գտնվել ենք արաբի լծի տակ: Բայց նույն օրերի գրվածքով՝ պարզվում է, որ մի քանի տասնյակ մարդով փախուստի ենք մատնել նույն արաբների ռեզուլյար բանակը եւ դուրս քշել Հայաստանից: Բանակ կոչվող ողորմելի այդ խաժամուժն էլ, պարզվում է, թվապես գերազանցել է մեր կտրիճների խմբին ոչ ավել, ոչ պակաս՝ ուղիղ հազար անգամ:

Ու՞մ չէ հայտնի մեկ դար առաջ մեր ազգի գլխին եկած գուլումը: Բայց նույն օրերին գրվեց, երգվեց եւ մինչ օրս էլ խրոխտ ու, ամենակարեւորը, համոզված ձեռով երգվում է ընկերների եւ համակիրների կողմից.

Կեցցե Հայաստան, եւ ազատություն, հայրենյաց պաշտպան՝ սուրբ Դաշնակցություն:

Դաշնակցությունը հաղթեց սուլթանին, նոր արեւ, նոր կյանք պարգեւեց հային:

Երգելուց ու շունչ քաշելուց հետո էլ այդ նույն մարդիկ խմում են ցեղասպանությունը ճանաչած հերթական երկրի կենացը: Եվ այս ամենին համապատասխանող էլ այդ էլիտա կոչվածն ենք ունեցել: Եվ ունենք էլ:

Այս առումով մտաբերեցի մի հատված վաղամեռիկ Ալեքսանդր Լեբեդի հարցազրույցից, որը նա տվել էր 90-ականների սկզբներին Վրաստանում ծավալված դեպքերի կապակցությամբ:

Վրացի թղթակցուհին հարցնում է. «...պարոն գեներալ, երբ մարտական գործողությունների գոտի ժամանեց գեներալ Գիվի Քեթովանին, ապա...»:

Լեբեդը հենց այդ խոսքի վրա ընդհատում է թղթակցուհուն. «...չհասկացա, ասում եք՝ ո՞վ ժամանեց»:

Թղթակցուհին կրկնում է. «...գեներալ Քերովանին ժամանեց»:

Գեներալ Լեբեդի արձագանքը. «Դե, գիտե՞ք ինչ, մադամ, Ձեզ մոտ՝ Վրաստանում, դուք կարող է նմանատիպ ոչ միայն գեներալ, այլ նաև մի քանի հատ էլ նույնիսկ գեներալիսիմուս ունենաք, բայց ես նման գեներալ չեմ ճանաչում եւ չեմ էլ պատրաստվում ճանաչել»:

Այդպիսին ենք մենք պատկերացնում մեր պատմական էլիտան անցած հազարամյակների հիմնական հատվածում, այդպիսին ենք մենք տեսնում նրան այսօր: Գավառական: Ամեն ինչով: Եթե ինչ-ինչ ուղորտներում գավառականությունը, մերժելի լինելով հանդերձ, կարող է, համենայնդեպս, իր գոյությունը մի կերպ պահպանել, ապա քաղաքականության մեջ գավառականությունը պարզապես աղետ է:

Եվ զարմանալու ոչ մի բան չկա. մեր ռազմական հաղթանակները ժամանակին չեն գտել եւ դեռես չեն էլ գտնում իրենց արժանի շարունակությունն ու ամրագրումը քաղաքական ասպարեզում: Որովհետեւ, շփվելով նրանց հետ, ով ժամանակին հավակնել է, կամ էլ այսօր է հավակնում ներկայանալ որպես ազգային էլիտա, օտարների գնահատմամբ ու ընկալմամբ՝ այդ հաղթանակներն ավելի շատ վերահաս վտանգի գիտակցումից ծագած համազգային աֆեկտի վիճակում կատարած սխրանքի արդյունք ու հետեւանք են, քան թե՛ օրինաչափ մի երեւոյթ: Եվ դրա համար էլ այսօր մեզ հետ փորձում են վարվել նույն ձևով, ոնց որ վարվեցին 1920-ին: Ի՞նչ կա որ: «Հայի բախտի» պոչը ոնց որ թե սկսել է նշմարվել: Ամենը՝ մի կողմ, բայց գրագիտության աստիճանով ու պատիճանարության առումով, այսօրվա էլիտա կոչվածը հաստատ զիջում է այն օրերի «ազգային ջոջերին»: Նրանց որ ֆոռացրին, բա անհրաժեշտության դեպքում սրանց ինչ կանեն...

Իրոք, ի վիճակի՞ է, արդյոք, այսօրվա հայկական էլիտան իր այժմյան կազմով ու այդ կազմին համապատասխան այսօրվա իր որակով դիմագրավել առկա մարտահրավերներին: Կասկածում ենք: Քանզի չկա հին ու նոր ճշմարտություն: Ճշմարտությունը միակն է բոլոր ժամանակների համար: Եվ երբ ասում են. «Ճշմարտություն՝ հին, ինչպես այս աշխարհը», հենց դա նկատի ունեն: Իսկ այդ հին աշխարհի անհերքելի ճշմարտություններից մեկն էլ այն է, որ, օրինակ, Կարթագենը կործանվեց ամենեւին էլ ոչ այն պատճառով, որ Հաննիբալը սխալ վարեց պատերազմները Հռոմի դեմ, այլ հատկապես այն պատճառով, որ պատվախնդիր ու խիզախ Հռոմն ի դեմս Կարթագենի հանդիպեց եսասեր ու մանրախնդիր մի ախոյանի, որն անկարող եղավ վեր կանգնել այսրոպեական շահերից, ավելին՝ պետական կյանքի հիմքերը փորձեց փնտրել ու հաստատել ոչ թե սեփական ժողովրդի խորքերում, այլ ընդամենը սեփական օլիգարխիայի մերկանտիլ հաշվարկների դաշտում:

Իրական ազգային էլիտան կրում է ուղղակի պատասխանատվություն պետության եւ ազգի ճակատագրի համար: Այդպիսին է մարդկությունը, նրա էությունը: Իսկ այդ էլիտայի «որակի ապահովման» համար ուղղակի պատասխանատվություն է կրում տվյալ ազգը: Երբ նա կամովին ու հոծարակամ թույլ է տալիս իրեն խաբել, մասնակիցն ու օժանդակողն է դառնում իրականության կեղծմանը, ապա իրական էլիտայի փոխարեն իր իսկ ձեռքով կերտվում է մի «երզաց»: Դրա գործունեության անփառունակ արդյունքներն իրենց պատմության տարբեր հատվածներում իրենց մաշկի վրա՝ այս կամ այն չափով, զգացել են պրակտիկորեն բոլոր ազգերը: Այլ հարց է, թե այդ մեծ ու ոչ շատ մեծ ազգային աղետներից հետո որն ինչ եզրակացության է հանգել...

## Պատմական կարծրատիպերը եւ 1920-ի բարդույթը

Կա հանրահայտ մի իրողություն (ի դեպ, մենք այսօր կխոսենք, պարզապես ստիպված ենք խոսել հիմնականում դրա մասին). ցանկացած կանոնի համար՝ «որպես կանոն», գոյություն ունեն նաև բացառությունները: Հասարակական ու քաղաքական ոլորտներում՝ նմանապես եւ հատկապես: Հասարակական գործընթացների բնութագրման համար դասականներից մեկը ժամանակին տվել է բավականին ունիվերսալ մի բանաձև: Այն մասին, որ «...Պատմությունը կրկնվում է երկու անգամ. առաջին անգամ՝ որպես ողբերգություն, երկրորդ անգամ՝ որպես ֆարս»: Հենց այս կանոնի առումով, հատկապես եւ մանավանդ նրա երկրորդ մասով, մենք, հայերս, ակնհայտ բացառություն ենք կազմում: Պատմությունը մեզանում, իրոք որ, կրկնվել է, այն էլ ոչ թե երկու, այլ շատ ու շատ անգամներ, սակայն մեզ համար, իր վերջնական արդյունքով՝ հիմնականում որպես ողբերգություն: Ամեն անգամ, երբ սկսվել է մեր պատմության հերթական գալարի մեզ համար համեմատաբար «բարենպաստ» փուլը, մենք ազգովի երդվել ենք, որ «այս անգամ» ոչ մի պարագայում այլևս չենք կրկնի նախորդի սխալները: Բայց զարմանալի օրինաչափությամբ կրկին ու կրկին եկել ու հայտնվել ենք նույն հանգրվանում: Այն է՝ հերթական կոտորած տաշտակի առաջ: Աշխարհի դասական ազգերից մեկն էլ ասում է, թե «հիմարները սովորում են սեփական սխալների վրա, իսկ խելացիները՝ ուրիշների»: Դուրս է գալիս, որ մենք այստեղ էլ ենք ներկայանում որպես բացառություն, քանզի անհերքելի է, որ դասեր չենք քաղում ո՛չ ուրիշի, ո՛չ էլ մեր գործած սխալներից: Ուստիեւ, ստացվում է, որ ո՛չ խելացի ենք, ո՛չ էլ հիմար: Բա ո՞վ ենք, ի՞նչ ենք: Պարզապես ՀՄԹ ենք: Մեր խիստ մտահոգիչ ներկայով, ավելի քան խնդրահարույց ապագայով եւ չափազանց խճճված ու ոչ այնքան ուրախ մեր անցյալով: Ճիշտն ասած՝ «անցյալ» բառից մենք մի տեսակ խուսափում ենք եւ գերադասում ենք «պատմություն» բառը: Պատմության հանդեպ մեր ունեցած վերաբերմունքը խիստ յուրահատուկ է: Մեր պատմությամբ ենք մենք բացատրում ու հիմնավորում մեր հաջողությունները, նրանով ենք բացատրում ու արդարացնում մեր անհաջողությունները: Այսօր էլ՝ կանգնած տարածքների եւ նույնիսկ պետականության կորստյան ոչ այնքան էլ անհավանական վտանգի առաջ եւ կրկին մեր հայացքը հատել ենք դեպի մեր պատմությունը:

Իրոք, «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» բառն այսօր էլ մեր իրականության մեջ, թերեւս, ամենահաճախակի գործածվող, հիշատակվող եւ՝ հատկապես ու մանավանդ, վկայակոչվող բառերից է: Ընկալումն ու վերաբերմունքը նրա նկատմամբ մեր մեծամասնության կողմից միանշանակ ու միարժեք չէ: Ոմանց համար՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ լոկ անցյալ է՝ փառահեղ կամ ամոթալի, իր դեպքերով՝ իրական եւ ոչ, իր տարեթվերով՝ ճշգրիտ եւ ոչ: Ոմանց համար նա հանդես է գալիս իբրեւ միակ ամենահաս ու ճշմարիտ դասատու եւ դատավոր, մյուսի համար նա զուտ գիտություն է՝ հենց իր ակադեմիական էությանմբ: Իսկ շատ հաճախ էլ, հատկապես ոչ մասնագետների շրջանում, դրանք բոլորը միախառնվում են եւ արդյունքում մեր կողմից փորձ է արվում ընկալել անընկալելին՝ զգացմունքայնության եւ ակադեմիզմի անհնարին այդ երկմիասնությունը: Իսկ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» կատեգորիայի ամենամեծ ֆենոմենն ու յուրահատկությունը, թերեւս, կայանում է նրանում, որ օբյեկտիվորեն միշտ կա երկու «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»՝ պատմություն իրական եւ պատմություն մեզ հասած:

Որքան էլ դա կարող է միստիկ թվալ, սակայն պատմության հետ կապված միակ ու անհերքելի ճշմարտությունն այն է, որ ցանկացած դեպքերին կամ ժամանակահատվածին առնչվող պատմություն իրականը ճշգրիտ չգիտի եւ չի էլ կարող գիտենալ եւ ոչ ոք: Եվ նույնիսկ այդ ժամանակներում ապրածները: Որոնք, նորին մեծություն ՊԱՏՄՈՒԹՅԱՆ պարագայում, պատմության իրենց հասանելիք հատվածը կերտելուց հետո՝ հենց իրենք են արդեն դառնում պատմություն: Պատմության այդ տեսակը, մատերիայի մարքսիստական սահմանման նման, «...օբյեկտիվ մի ռեալություն է, որը գոյություն ունի մեր գիտակցությունից անկախ...»: Վկայակոչել, մատնացույց անել, կամ էլ հղում տալ պատմության այս տեսակի վրա՝ անիմաստ է եւ անհնարին: Իսկ ամենակարեւորը՝ անհնարին է ու բացառված է ներազդել նրա վրա, փոփոխել այն, առավել եւս՝ օգտագործել այն ինչ-ինչ նպատակներով: Մյուս կողմից՝ պատմության հենց այդ տեսակն է իր ընթացքով օբյեկտիվորեն կանխորոշել եւ արարել ցանկացած ազգի ու պետության այսօրը:

Լրիվ այլ բան է պատմության մյուս տեսակը՝ պատմություն մեզ հասածը: Սա արդեն ձեռակերտ է: Նա հյուսվել, գրվել է կազմվել է մարդ-անձի մտքով, լեզվով ու գրչով: Եվ հենց այդ ամենի շնորհիվ է, կամ էլ պատճառով, որ լի է սուբյեկտիվիզմով: Հենց մեզ հասած պատմությունն է, որ հասանելի է մարդկանց համար ու մատչելի, ենթակա մարդկային միջամտության: Պատմության այս տեսակի ֆենոմենն էլ կայանում է նրանում, որ չկա եւ չի կարող գոյություն ունենալ այդ պատմության գոնե մի էջ, գոնե մի տող, որի ճշմարտացիությունը համարվի ապացուցված անհերքելիորեն ու վերջնական, եւ իսպառ բացառվի որեւիցէ կասկած, այլակարծություն, տարրնթերցում, կամ էլ ճշգրտման հավանականություն ու հնարավորություն ժամանակների ու տարեթվերի, դեպքերի եւ իրադարձությունների հանդեպ: Ինչպես դա տեղի ունի, ասենք, բազմապատկման աղյուսակի պարագայում: Հակառակը: Մարդու ձեռքով կազմված այդ պատմությունը պարբերաբար՝ ելնելով պահի պահանջներից, մկրատվում է կամ լրացվում, սեւացվում է կամ պարզեցվում, մեկնաբանվում է որպես դոգմ կամ իսպառ հերքվում: Նա մշտապես սրբագրվում է եւ խմբագրվում: Ի վերջո՝ կեղծվում: Իսկ ամենակարեւորը՝ անխնա շահարկվում է եւ օգտագործվում մարդկանց կողմից որպես հզոր մի զենք՝ շատ կոնկրետ եւ միանգամայն հասկանալի նպատակների համար:

Պատմության այդ տեսակի այսօրվա վիճակով ու «ձեւաչափով» էլ կանխորոշվում ու կերտվում է տվյալ ազգի եւ պետության վաղվա օրը: Պատմության հենց այս տեսակն էլ՝ դպրոցական դասագրքերից մինչեւ հանրագիտարաններ ու խիստ մասնագիտական հետազոտություններ, կազմում է այն ամենը, ինչի տակ էլ մենք հենց հասկանում ենք մեզ հասած պատմությունը:

Դեպքերի, իրադարձությունների, անձերի եւ միջավայրի գնահատման առումով այստեղ միշտ էլ առկա են մի քանի անհաշտ տեսակետներ: Դրանցից մեկը, սովորաբար, բնութագրում են «ընդունված», «ճանաչված», «ավանդական», «հայտնի» եւ նմանատիպ այլ բառերով, որպեսզի հնարավորինս քիչ օգտագործվի «պաշտոնական տեսակետ» բառակապակցությունը, եւ դրանով իսկ չբացահայտվի տվյալ տեսակետի ստեղծման եւ արմատավորման իրական պատվիրատուն: Պաշտոնական տեսակետի ստեղծողներն ու հրամցնողները միշտ էլ նույն տեսակի մարդիկ են՝ բոլոր ժամանակներում եւ բոլոր տեղերում: Դա կառավարողների կողմից իջեցված պատվերներն ընդունող ու կատարող իշխանամերձ-իշխանամետ համապատասխան շրջանակներն են: Պաշտոնականից տարբերվող տեսակետներ արտահայտող եւ կրող զանգվածն էլ պայմանականորեն կարելի է բաժանել հետեւյալ երկու խմբի: Մի խումբը գործող իշխանության քաղաքական հակառակորդներն են՝ իրենց ստվերային իշխանամերձ շրջանակներով, որոնք, ամենեւին էլ պարապ նստած չեն եւ իշխանության գալու դեպքում շատ արագ լույս աշխարհ կհանեն եւ հանրությանը կմատուցեն արդեն իրենց կողմի պաշտոնական տեսակետը: Երկու դեպքում էլ նման «պատմության դասընթացում» անաչառության որեւիցէ հետք փնտրելն անգամ անիմաստ է:

Մյուս խումբը քաղաքական կոնյուկտուրայից ազատ, անկախ կեցվածք ու մտածողություն ունեցող անձինք են, շատ դեպքերում՝ պատմագիտության առումով ոչ մասնագետներ: Խոսքն այստեղ բնավ չի գնում թողութիւններով կամ այլ բնույթի խիստ կասկածելի «հրատարակություններով» ուսումնառություն ստացած ինքնուս «պատմագետների» մասին: Խոսքը գնում է այն զանգվածի մասին, որտեղ ամեն մեկը, որպես գրագետ ու մտածող անձ, շահագրգիռ կողմից մատուցվող ամեն մի նյութ «հալած յուղի տեղ» չի պատրաստվում ընդունել: Դա էլ ասենք, որ պատմության վերաբերյալ պաշտոնականից տարբերվող տեսակետ հայտնելը երբեւիցէ այնքան էլ անվեղ ու անվնաս մի մտավարժանք չի եղել եւ հիմա էլ այդպիսին չէ: Գործն այսօր, իհարկէ, խարույկի ու կառափնարանի չի հասնում, բայց քանի որ այդ ամենն ի վերջո շոշափում է ոմանց քաղաքական շահերը, ապա այլ տեսակետներ հայտնողները, լավագույն դեպքում, անխնա սկսում են պիտակավորվել որպես տգետ, դիլետանտ, թերուս, անտեղյակ, մեկ-մեկ էլ՝ նաեւ այդ խոսքաշարը եզրափակող «ազգուրաց» ու «ազգադավ» որակումներով: Բայց, միեւնույն է, ինչքան էլ որ քարկոծեն եւ նույնիսկ ճնշեն ու հալածեն «միակ ճշգրիտ» պատմության հանդեպ կասկածանքով վերաբերվողներին, դրանից ոչինչ չի փոխվի: Իրական պատմությունը կմնա իրական պատմություն, իսկ մարդու կողմից՝ իրեն հարմար ձեւով կազմած պատմությունն էլ կմնա այդպիսին:

Օրինակ, մեր ազգի հոգեւոր վերակողմնորոշման, այն է՝ քրիստոնէություն ընդունելու հետեւանքների եւ արդյունքների վերաբերյալ մասնագետների կողմից հնչեցրած գնահատականները կարող են լինել տարբեր եւ ոչ միաբժեք: Եվ այդպէս էլ իրականում կա: Մակայն, մյուս կողմից, «ոչ մասնագետին» հասած օբյեկտիվ պատմական իրականությունը միակն է. քրիստոնէություն ընդունելուց մեկ դար էլ չանցած՝ ընդամենը ութ տասնամյակ հետո, մենք հասանք մեր սեփական պետականության կործանմանը: Եվ այլեւս երբեւիցէ չկարողացանք վերականգնել այն ո՛չ իր նախկին տարածքով, ո՛չ իր նախկին հզորությամբ: Հետագայում՝ զուտ արտաքին բարենպաստ պայմաններ ի հայտ գալու շնորհիվ, այստեղ-այնտեղ գոյացող հայկական պետական գոյացություն-կազմավորումներն իրենց էությամբ ավելի շատ համապատասխանում էին ժամանակավոր ու խիստ կարճաժամկետ գոյատեւման դատապարտված «քվազիպետություն» դասակարգմանը, քան ընդունված առումով՝ բուն «պետություն» հասկացությամբ: Եվ մեր պատմության քրիստոնէական ամբողջ հատվածում՝ մինչ օրս էլ, մենք այլեւս երբեւիցէ չենք ունեցել այն քաղաքական դերն ու կշիռը, ինչը որ ունեցել է հայությունն իր պետականությամբ հանդերձ իր պատմության նախաքրիստոնէական շրջանում: Պատկերավոր ասած՝ մեր պատմության քրիստոնէական շրջանում հայ ժողովուրդը զբաղված է եղել, հիմնականում, «օտարի բանակը կերակրելով»: Կրկնենք մեկ անգամ եւս. մենք ամենեւին չենք կապում այդ ամենի պատճառները քրիստոնէություն ընդունելու հետ: Բայց ասենք միաժամանակ, որ այդպիսին է ընկալվում մեր անցած պատմական ուղին ոչ մասնագետ կոչվող զանգվածի կողմից: Իսկ ի՞նչ է, ուսյալ այրերը կներկայացնեն հակառակը: Մեր անընդմեջ վերելքը: Եվ նմանատիպ՝ խիստ վիճահարույց հարցեր, կարելի է բերել հերթով եւ անվերջ: Ամենաթարմը, ցավոք բացասական առումով, Առաջին Հանրապետության երկու տարիներն են:

Չնայած նրան, որ եղան 1918-ի հաղթական մի քանի ճակատամարտերը, եղավ 1919-ի Կարսի վերադարձը (Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստան), այդ ամենով հանդերձ՝ մեզ համար ամեն ինչ, ի վերջո, ավարտվեց 1920-ի աշնան խայտառակությամբ:

Ինչպէս եւ ցանկացած իրադարձությունների պարագայում, մեզ համար ավելի քան ողբերգական այդ իրադարձությունները նույնպէս ունեցել են իրենց իրական պատճառները: Մենք ամենեւին չենք հավակնում անցկացնել այստեղ դեպքերի ռազմաքաղաքական փորձաքննություն եւ լույս աշխարհ հանել ու հանրությանը ներկայացնել անհերքելի հիմքեր ունեցող բացատրություններ: Ի դեպ, նշենք նաեւ, որ այդ դեպքերի հետ կապված բազմաթիվ հարցերի սպառիչ եւ հիմնավորված պատասխաններ այդպէս էլ մինչ օրս, ցավոք սրտի, դեռ չեն հնչել: Եթէ չհաշվենք շահագրգիռ կողմերի (իմա՝ հիմնականում եւ գլխավորապէս՝ բոլշեւիկ-դաշնակ գույզի) միմյանց հասցեին հնչեցրած պոպուլիստական բնույթի մեղադրանքները: Անկախ՝ գրված «աշխատությունների» էջաքանակից ու հաստությունից: Այնպէս որ, համապատասխան մասնագետների համար անելիքներ կան՝ լի ու լի:

Որքան էլ մեր ասածը մեզ հետ տանի դեպի անցած դար, բայց, համենայնդեպս, երեւի թէ կարիք կա, որպէսզի պարբերաբար ինքներս մեզ համար ճշտենք, թե հատկապէս ի՞նչ ենք մենք հասկանում, ասելով «մեր պատմություն»: Դա Հայաստան Պետության պատմությունն է, թե՛ հայ կոչվող ժողովրդի պատմությունը: Ոչ շատ հեռավոր անցյալում՝ Խորհրդային Միության օրոք, մյուս Խորհրդային Հանրապետությունների պատմությանն առնչվող դպրոցական դասընթացներն, օրինակ, վերնագրված էին որպէս «Ադրբեջանի պատմություն», «Վրաստանի պատմություն», «Ուզբեկստանի պատմություն», «Ուկրաինայի պատմություն» եւ այլն: Մեր մասով, ինչպէս բոլորը գիտեն, դասընթացը կոչվում էր (եւ հիմա էլ կոչվում է) «Հայ ժողովրդի պատմություն»: Ստացվում է, որ մինչեւ հոկտեմբերյան դրոշի փոփոխումը բոլորն էլ ունեցել են պետականություն: Բացի հայերից: Պարզվում է, որ ադրբեջանական պետականությունն, օրինակ, ունի հինգ հազար տարվա պատմություն, իսկ ուկրաինացի ազգն, օրինակ, ոչ ավել-ոչ պակաս, ուղիղ հարյուր քառասուն հազար տարեկան է:

Հասկանալի է, որ նման բացարձակ ցուցանիշների հետ մենք չէինք կարող (եւ հիմա էլ չենք կարող) ոտք գցել, բայցեւայնպէս, մի քիչ տխուր է, որ բազմազգ ու համերաշխ այն ընտանիքում մենք ընկալվում էինք որպէս «անպետություն» մի ազգ: Ասենք՝ չուրջերի, կամ էլ, մեր իրական տարիքն հաշվի առնելով,

լավագույն դեպքում՝ գնչուների նման:

Պատմությունն, իրոք, մնում է պատմություն՝ իր կեղծիքներով եւ կոնյուկտուրայով: Բայց խոսքը չի գնում մեր պատմության վերանայման անհրաժեշտության, կամ էլ հայ պատմագրության ոչ արժանահավատ լինելու մասին: Խոսքը շատ ավելի կարեւոր բանի մասին է: Խոսքը դարերի ընթացքում ձեւավորված պատմական կարծրատիպերի արքաններից ձերբազատվելու մասին է: Առավել եւս՝ հաշվի առնելով աշխարհում այսօր առկա իրողությունները:

Ժողովուրդը սեփական պատմության վերաբերյալ շատ հաճախ ասում է, թե ազգի պատմությունն արնակից ազգականի նման մի բան է: Հարազատիդ նման սեփական պատմությունդ էլ դու չես ընտրում. նա գոյություն ունի եւ ներկայանում է քեզ հենց այնպիսին, ինչպիսին որ կա: Եվ դու էլ պարտավոր ես ընդունել այն այնպիսին, ինչպիսին որ ինքը կա: Օրինակ, մեր պատմությունը՝ ինչպես նշեցինք, իր ամբողջ երկար ու ձիգ ընթացքով, ամփոփ ձեւով մեզ է ներկայանում այսօր այն խիստ անհրապույր փաստով, որ մեր էթնիկ բնակության տարածքը, ինչն ավելի պարզ լեզվով կոչվում է բնօրրան կամ հայրենիք, կրճատված-նվազեցված է ուղիղ տասն անգամ: Դրա պատճառների, մեղավորների, բարենպաստ եւ անբարենպաստ պարագաների վերաբերյալ կարող են հնչել բազում եւ տարբեր տեսակետներ ու գնահատականներ: Բայց իրականությունը, միեւնույնն է, կմնա այն, ինչ որ կա:

Այլ բան է «պատմության դասեր» ասածը: Եթե, օրինակ, մեկնենք այն ակնհայտ փաստից, որ իր պատմության ամբողջ ընթացքում հայը, արհամարհելով զոհեր տալը, միշտ էլ ձգտել է վերականգնել իր պետականությունը եւ դա նրան քանիցս հաջողվել է, աներկբայորեն կարելի է պնդել, որ հայի մեջ միշտ էլ կա, արթուն է պետականության զգացողությունը, սեփական երկիրն ունենալու ու պաշտպանելու վճռականությունը:

«Հայ երկիրը ոտքի է կանգնած, նա այժմ ներկայացնում է մի ընդարձակ ռազմաճակատ, ուր մարդ թե կին, ծեր թե մանուկ, գիտուն թե տգետ, շինական ու քաղաքացի, որպես մի մարդ ոտքի են ելել կամ մեռնելու եւ կամ ապրելու՝ վերջնականապես մեռնելու այն գագանին, որ իր հոգեւարքի մեջ ուզում է մեզ էլ իր հետ տանել, որովհետեւ նա՝ մեր թշնամին, անգամ իր սատկած վիճակում էլ մեզանից չի ուզում պոկ գալ: Հայաստանի որ քաղաքը որ իջեւանում ենք, ներկայացնում է մի կատարյալ ռազմադաշտ: Ամենքը մի նպատակի են գնում՝ կռվել թշնամու դեմ վճռականությամբ, տեսնենք թե հայի վճռականությունն ինչ աստիճանի ուժեղ է»:

Այս ամենն իրողություն է, եւ այս տողերը պատկանում են մեր Առաջին Հանրապետության բանակի կադրային մի սպայի, եւ դժվար չէ գուշակել, թե հատկապես որ օրերին են գրվել: Այսինքն, այս պահով պատմության դասեր կոչվածից մենք ոնց որ թե ճիշտ եզրահանգումներ ենք արել: Տեսնենք այժմ, թե իրականում, ինչպես ասում են՝ երկարատեւ հեռանկարում «... հայի վճռականությունն ինչ աստիճանի ուժեղ է»:

«Դասալքությունը սարսափելի չափերի է հասել: Գիշերները զինվորները հարյուրներով են փախչում: Ձորքի բարոյական կորովը բավականին ընկած է. գորավարներից սկսած մինչեւ հասարակ զինվորը ոչ միայն դիմադրելու, առաջխաղալու հույս չունեն, այլ հավատացած են, որ այլեւս ամեն բան վերջացել է: Բաբելոնյան խառնակություն է տիրում: Մեր բանակը չի կռվում եւ օր առաջ շտապում է տուն հասնել, որպեսզի թշնամուն չպատահի: Մարդ ուղղակի ապշած է մնում. մեր բանակը հրաշալի հագնված է Անգլիայից ստացված նոր հագուստներով, սպառազինված է լավ, ինչպես եւ պարենավորված: Ապա ինչու՞ չեն կռվում, ի՞նչ է պատճառը:... Թշվառ հայ ժողովուրդ, մինչեւ ե՞րբ ոտնակոխ պիտի լինես»:

Այս ամենը, ցավոք սրտի, նույնպես իրողություն է, եւ տողերն էլ պատկանում են նույն սպային, եւ նույնպես դժվար չէ գուշակել, թե հատկապես որ օրերին են գրվել: Իսկ երբ ամեն ինչ ավարտված էր, այդ սպայի եւ շատ շատերի կողմից հնչեցրած բազմաթիվ «ինչու»-ներին ամենից հակիրճ ու բովանդակալից պատասխանը հնչեցրել է, թերեւս, հենց «օրվան հերոսներից» մեկը՝ Ռուբենը: Նույն ինքը՝ Առաջին Հանրապետության ռազմական նախարար Մինաս Տեր-Մինասյանը. «... Անդրկովկասյան երկրամասում ներկա սահմանային դրությունները հետեւանքն են մեր ցուցադրած ապիկարության եւ անկարողության»:

Այսինքն, երբ թեքվում ենք «լավ սկիզբով» պատմություններից դեպի նրանց «տխուր ավարտը», ապա միակ եզրակացությունը, որ մարդու մտքին գալիս է, այն է, որ հայի մոտ իսպառ բացակայում է պետականության զգացողությունը: Դիմելով այսօրվա մոդայիկ տերմինաբանությանը, ոմանք նույնիսկ ասում են, թե «պետականության գենը հայերի մոտ մեռած է»:

Անդրադառնալով մեր այսօրվա ազգային ու պետական առաջնային ու կարելորագույն հիմնախնդրին՝ «տարածքների հարցին», կարող ենք արձանագրել, որ հայ հասարակությանն այսօր էլ ավելի շատ եւ հատկապես մտահոգում է մեր կողմից հերթական «ապիկարության ու անկարողության» հնարավոր ցուցադրման սպառնալիքը: Եվ դրա համար էլ շատերին համակել է բնական-բնագոյային մի վախ, որ այս անգամ նույնպես կարող է կրկնվել մեզ համար խիստ բնորոշ ու կործանարար պատմական օրինաչափությունը եւ, ինչպես կատարվել է մեր պատմության հարյուրամյակների ընթացքում, այս անգամ էլ մենք կկորցնենք տարածքներ: Որից հետո, պարզ ասած, արդեն չգիտենք էլ, թե որտեղ եւ ոնց ենք տեղավորվելու այս հողագնդի վրա: Քանզի մեր կողմից հերթական զիջմանը սպասող մեր հարեւանները մի շատ անհարմար «խասյաթ» ունեն. նրանք ուրիշի հողերն իրենցով են անում ոչ թե «եվրոպական չափանիշներին» համապատասխանող «դասական» նվաճման միջոցով, ինչը նույնպես, պետք է ասել, այնքան էլ հաճելի բան չէ, այլ շատ ավելի պարզ ու արդյունավետ եղանակով՝ իրենց ազգային չափանիշներին համապատասխան: Այն է՝ այդ հողի վրա բնակվողներին նրանք պարզապես մորթում են: Չմոռանանք, սակայն, որ ի մխիթարանք մեզ, մտահոգված աշխարհն այդ երեւոյթը ցեղասպանություն է անվանում: Եվ, ասում են, նույնիսկ օրենքով արգելվում է դրա իրականացումը: Հատկապես այն ազգերի հանդեպ, որոնք այդ ճանապարհը մի անգամ արդեն անցել են:

Բայցեւայնպես, իրավիճակն ստիպում է, որպեսզի հայերից ոմանք՝ «հայի բախտից» հոգնած ու հեռանկարում մեկ այլ՝ ոչ այդչափ ողբալի, բախտ ունենալու ցանկությամբ լցված, ցանկանան վերջապես հստակեցնել, պարզել-պարզաբանել իրենց համար այն բոլոր իրական դեպքերն ու պատճառները, որոնց հետեւանքով ի վերջո իրենք հայտնվեցին իրենց սեփական հայրենիքի ընդամենը տասը տոկոսը կազմող այս «դռերի» վրա: Որպեսզի այսօր էլ չկրկնեն իրենց փառահեղ նախնիների փառահեղ սխալները, դուրս պրծնեն այդ անիծյալ շրջանից եւ կարողանան իրենց ձեռքում պահել գոնե այսօրվա ունեցածը:

Ի դեպ, այսօր կա նաեւ բավականին տարածված (եւ պետք է ասել՝ բավականին հիմնավորված) մի տեսակետ-կարծիք, որ վերջին քսան տարում մեր աչքի առաջ խտացված ձեւով եկավ-անցավ մեր ամբողջ պատմությունը՝ հայոց պատմությանն այդքան բնորոշ ու սովորական դարձած հանրագիտարանային իր բոլոր փուլ- արարներով:

- Արար առաջին. կարոտ առ պետականություն -ժողովրդական ընդվզում-պայքարի վերելք- պատերազմ զավթիչի դեմ-հաղթանակ՝ ազգի լավագույն զավակների գոհաբերմամբ-պետականության վերականգնում:

- Արար երկրորդ. գինարբուք հաղթանակից-որպես հետեւանք՝ հաղթանակի եւ փառքի ուզուրպացիա մի խումբ անձանց կողմից-իշխանության գրավում ազգային հիմնախնդրներից բացարձակապես հեռու եւ անտեղյակ ինչ-որ խմբավորման կողմից:

- Արար երրորդ. անկախության, պետականության գաղափարների արժեզրկում-արյան գնով ձեռք բերված հաղթանակի նսեմացում-ազգի բարոյալքում եւ այլասերում-ատելությունն իշխանության նկատմամբ սկսում է նույնացվել ատելությանը սեփական երկրի նկատմամբ: Որտեղ հա՞ց, էնտեղ կա՞ց: Ով ի՞նչ բաշարում է, իրեն հալա՞լ է:

- Արար չորրորդ. ներսում՝ անօրինականության խրախճանք («բեսպրեդել»), դրսում՝ բացասական քաղաքական հաշվեկշիռ, Հայաստանի՝ որպես ինքնուրույն պետության, հետագա գոյության անիմաստություն:

- Արար վերջին. ազգի ջոջերի կողմից՝ ազգի լուռ եւ խորհմաստ համաձայնության ներքո հնչեցվում է հայ ազգային եւ քաղաքական մտքի ապոֆեոզը. կապիտուլյացիա, հողերի հանձնում, անիմաստ դարձած հայ-թուրքական սահմանի բացում: Էկրանին ձյունապատ Մասիսն է: Նրա ֆոնի վրա՝ 1915 թվականի կադրերն են: Ապա նրանց փոխարինում են Քյամալ Աթաթուրքի, Քյազիմ Կարաբեքիրի, հայր եւ որդի Ալիեւների պատկերները: Գնացքը դեպի Կարս է տանում հայ-թուրքական խառը հանձնաժողովը: Երգչախումբը երգում է «Ախ, Վասպուրական, տխուր Հայաստան...», հետո սահուն անցում է կատարում դեպի «Ադանայի ողբը»: Իշխանությունից վերջնականապես դուրս գալու Դաշնակցության Բյուրոյի կողմից հնչեցվող որոշման խորխտ հնչյունների ուղեկցությամբ վարագույրը դանդաղ իջնում է: Համանախազահները հայտարարում են A N T R A C T: Այն է՝ ընդմիջում մի վեց-յոթ դար:

...Stop! Հետ ենք պտտում: Այս անգամ, կարծես, իրոք որ ահագին մարդ կա, ովքեր դեմ են բոլոր արարներին՝ բացի առաջինից: Եվ առաջինից հետո հրաժարվել են մասնակցել մյուսներին: Քանզի չեն ցանկացել, հրաժարվել են մասնակիցը լինել ազգային խայտառակության նախապատրաստմանն ու կերտմանը: Վերջապես ունենք պետություն: Արդեն քսան տարի: Եվ արդեն քսան տարի է, ինչ կերակրում ենք ոչ թե օտարի, այլ սեփական բանակը: Հող գրավողն էլ, հող զիջողն էլ՝ պետությունն է: Իր բանակի միջոցով, իր զինվորականության ձեռքով: Մեր բանակն էլ՝ մեր տրամաչափի պետությունների բանակների մեջ համարվում է ամենաուժեղն ու մարտունակը: Այսօր: Իսկ վաղը՝ Եթե հանկարծ իրոք իրագործվեն տարբեր մադրիոյան ու մայնդորֆյան սկզբունքները եւ ինչ-ինչ գործընթացները, ինչպիսի՞ն կհամարվի մեր պետության բանակը: Եվ այդ դեպքում, առհասարակ, ինչո՞վ արդարացված ու պայմանավորված կլինի նրա հետագա գոյությունը: Ո՞ր անհրաժեշտությունից դրդված նա պետք է մնա: Որպես սեփական ժողովրդի հանդեպ զսպող ու պատժիչ գործո՞ն: Ո՞վ է տեսել, որ հաղթանակած բանակի դեմը դնեն նրա կապիտուլյացիայի ակտը: Ցանկացած ժողովուրդ ստեղծում ու պահում է պետություն եւ բանակ ոչ նրա համար, որ դրանց միջոցով հանձնի իր հողերը, այլ նրա համար, որ դրանց միջոցով պահի այդ հողերը: Ինչ է, նույնիսկ այս այբբենական ճշմարտության պահով էլ մենք ուզում ենք բացատրություն կազմել: Մենք մեր ձեռքով մեր գլխին մի նո՞ր 1920 թիվ ենք ուզում սարքել, ինչ է: Մեր կարծիքով, այսօրվա մեր «ապիկարությունը» կայանում է նրանում, որ մենք կամավոր գերի ենք դարձել բանակցային առումով փակուղային, իսկ մեր ազգային շահերի կտրվածքով՝ կործանարար այն մտածողությանը, թե միայն տարածքներ հանձնելու միջոցով Հայաստանի համար հնարավոր է հասնել երկարատեւ խաղաղության ու տնտեսական զարգացման: Դա ուղղակի հետեւանք է հենց 1920 թվական կոչվող բարդույթի՝ քո կողմից հաղթանակով սկսած պատերազմն ավարտելու գործընթացը կամավոր զիջել հակառակորդին: Իսկ այսօրվա «անկարողությունն» էլ այն է, որ չենք կարողանում փշրել մեր վզին փաթաթած նման կարծրատիպերը եւ սեղանին դնել խելամիտ եւ անկասելի այլ առաջարկներ: Հաղթողին վայել:

### **Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգ**

Վերջին տասնամյակում տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ SS) ոլորտի զարգացումն ու տեղեկատվական հասարակության կայացումը կարևորագույն խթան են հանդիսացել աշխարհի բոլոր զարգացած երկրների տնտեսության մրցունակության և արտադրողականության բարձրացման, կառավարման, ինովացիոն և գիտակրթական համակարգերի, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների զարգացման համար և ճանաչվել է գերակա ուղղություն՝ որպես գիտելիքահենք տնտեսության կառուցման հիմնաքար:

## **Արցախյան քրոնիկոն**

## Հունիս

Հունիսի սկզբներին հրավիրվել է ԼՂՀ Վերահսկիչ պալատի (ՎՊ) խորհրդի հերթական նիստը, որի ժամանակ հայտարարվել է, որ ՎՊ-ն խախտումներ է արձանագրել 2008թ. պետական բյուջեից «Կրթություն եւ գիտություն» ծրագրով հատկացված միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության ժամանակ. խախտումներ են կատարվել ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ շրջանների կրթական մի շարք հաստատություններում:

Հունիսի 8-ին Ղարաբաղ են այցելել Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Ֆրանսուա Ռոշբլուանը եւ նրան ուղեկցող՝ Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի քարտուղար Ժան-Պիեռ Դելանուան եւ Ֆրանսիայի Սեն Շամոն քաղաքի խորհրդի անդամ Էմանուել Մանդոնը, ովքեր հանդիպումներ են ունեցել ԼՂՀ նախագահականում, Ազգային ժողովում, ինչպես նաեւ զրուցել են Արցախի ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

«Բանակցային գործընթացում առաջին հերթին պետք է կարգավորվի Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի հարցը: Մինչեւ այդ հարցը չկարգավորվի՝ առաջ գնալն անհնար կլինի», - այս համոզմունքն է Ստեփանակերտում արտահայտել Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության պատգամավորական խմբի ղեկավար Ֆրանսուա Ռոշբլուանը:

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունն ամփոփել է բաժնետոմսերի տեղաբաշխման գործընթացի առաջին փուլը, որի արդյունքներով՝ տեղաբաշխվել է 905 մլն 177 հազար 700 դրամ՝ 862 հազար 74 բաժնետոմսով, որոնք ձեռք են բերել թվով 1111 հոգի՝ ինչպես ԼՂՀ-ից եւ ՀՀ-ից, այնպես էլ ԱՄՆ-ից, Շվեյցարիայից, Սլովակիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Բելգիայից, Ռուսաստանից, Իրանից եւ Միացյալ Արաբական Էմիրություններից:

Հունիսի կեսերին Ստեփանակերտում անց է կացվել «Ընծա» ամենամյա համահայկական մրցույթ-փառատոնը՝ նախորդ չորս մրցույթների թվով 23 մրցանակակիրների մասնակցությամբ, որի արդյունքում Գրան պրիին արժանացել է արցախցի երիտասարդ երգիչ Ռազմիկ Ամյանը:

Հունիսի 19-ին Ստեփանակերտում անց է կացվել «Քաղաքացիական հասարակությունը եւ կոռուպցիայի դեմ պայքարը» թեմայով համաժողով, որին բացի Ղարաբաղի օրենսդիր, գործադիր, դատական մարմինների եւ այլ կառույցների ներկայացուցիչներից, մասնակցում էին նաեւ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, Հայաստանի Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանը, դատական մարմինների մի շարք անդամներ:

Հունիսի 19-21-ը Ստեփանակերտում անց է կացվել BRIDGE ARTSAKH տնտեսական համաժողովը, որի ընթացքում տարբեր բաժանմունքներում 100-ից ավելի մասնագետներ քննարկել են բիզնեսի զարգացմանն առնչվող մի շարք հարցեր:

«Մենք պիտի հասնենք նրան, որ Ղարաբաղում կենսամակարդակը լինի ավելի բարձր, քան ՀՀ-ում, որովհետեւ Լեռնային Ղարաբաղում լուծվում է ոչ միայն այստեղի բնակիչների կենսամակարդակի խնդիրը, այլ հայ ժողովրդի, եւ մեր ազգային խնդիրների լուծման տեսակետից մենք պարտավոր ենք ռազմական մեր հաջողություններն ամրագրել նաեւ տնտեսական ոլորտում, ուստի Ղարաբաղի տնտեսական զարգացումը Հայաստանի կառավարությունը պետք է դիտարկի որպես առաջնահերթություն», - հայտարարել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը BRIDGE ARTSAKH տնտեսական համաժողովի բացման արարողության ժամանակ:

«Անկախ պետբյուջեի հնարավորություններից՝ 2010 թվականին պետք է առաջին հերթին իրականացվի ոռոգման համակարգերի զարգացման ծրագիրը, ըստ որի 2010թ. նախատեսվում է ունենալ առնվազն 8 հազար հեկտար ոռոգովի հողատարածք», - այս մասին ԼՂՀ կառավարության հունիսի վերջին կայացած նիստում հայտարարել է վարչապետ Արա Հարությունյանը:

Հունիսի 23-ին ԼՂՀ Ազգային ժողովի գրադարանում անց է կացվել հուշ-ցերեկույթ՝ նվիրված ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր ու քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վլադիկ Հակոբյանի հիշատակին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ:

.Հունիսի 24-ին Ստեփանակերտի «Արմենիա» հյուրանոցում տեղի է ունեցել ԼՂ հարցով Ռուսաստանի նախագահի նախկին ներկայացուցիչ, Ռուսաստանցի դիվանագետների ասոցիացիայի փոխնախագահ, Ռուսաստանի միջնորդական առաքելության նախկին ղեկավար Վլադիմիր Կազիմիրովի «Խաղաղություն՝ Ղարաբաղին» գրքի շնորհանդեսը:

.Այսուհետ ամուսնության նպաստ կստանան նաև այն զույգերը, որոնց՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսիններից մեկը հանդիսանում է ՀՀ քաղաքացիություն ունեցող՝ ԼՂՀ Պաշտպանության բանակի պայմանագրային զինծառայող, իսկ մյուսը ԼՂՀ քաղաքացի է կամ ունի ԼՂՀ-ում մշտական հաշվառում՝ սա են ենթադրում «Նորաստեղծ ընտանիքների համար ամուսնության նպաստ սահմանելու մասին» 2007թ. թիվ 724 որոշման մեջ վերջերս կատարված լրացումներն ու փոփոխությունները: